# Azg
Azg
armenian daily

Մայիս 12
Չորեքշաբթի
1993

ՈՒՍԿՎԱՐ ԱԶԳԱՅԻՆ ՕՐԱԹԵՐԹ
Գ տարի, թիւ 88 (339)
գինը 10 ռ.
դասիչ 69149

Երեւան 375010
Հանրապետութեան 47

հեռ. 581841, ֆաքս 562941
տելեքս 243266 CPIRI SU


Վրաստան

## Հզոր պայթյուն գազատարում

Թբիլիսի, 11 մայիս, «Մնարէ»: Այսօր կեսօրին Թբիլիսիից 60 կմ հյուսիս անցնող գլխավոր գազամուղում տեղի ունեցավ ուժեղ պայթյուն: Ժ. 15-ին գազի մատակարարումը հանրապետություն ամբողջությամբ դադարեցվեց: Ինչպես հաղորդեցին Մնարէի թղթակցին «Գրուզտրանսգազ» դեղարտամենտում, միջադեպի վայր են մեկնել մասնագիտացված վերանորոգման բրիգադները եւ Վրաստանի ՆԳՆ օպերատիվ խումբը:

Միաժամանակ, ինչպես հաղորդեցին ԻՖ-ին «Գրուզտրանսգազ» դեղարտամենտում, Հյուսիսային Օսիայից Վրաստան մտնող գազամուղը փակվել է այն բանից հետո, երբ նրա երկու ճյուղերից մեկը վնասվել է Վրաստանի հյուսիսում գտնվող Պասանաուրի ավանի շրջանում տեղի ունեցած հոսքի պատճառով: ■

Երեւան

## Վարկերը կսպասարկեն

ՀՀ Գերագույն խորհրդի երեկվա նիստում հիմնական ենթակայման առարկա դարձավ արտասահմանյան երկու բանկերի (Վերակառուցման եւ զարգացման միջազգային ու Վերականգնման ու զարգացման եվրոպական) կողմից Հայաստանի Հանրապետությանը համապատասխանաբար 12 եւ 57,4 մլն ամերիկյան դոլլարի վարկեր տրամադրելու ՀՀ կառավարության հետ կնքված պայմանագրերը:

Առաջին վարկը պետք է ծառայի հանրապետության տնտեսական կառավարման, սոցիալական ապահովության ձեռնարկությունների սեփականաշնորհման եւ վերակառուցման, ֆինանսական վերափոխումների բնագավառներում անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման, կադրերի վերապատրաստման եւ խորհրդատվական ծառայությունների խնդիրներին: Երկրորդի նպատակն ավելի հստակ է՝ Հրազդանի ՊՇԷԿ-ի 5 դ բլոկի վերակառուցման նախագծի իրականացում:

Ինչպես նշեց էկոնոմիկայի նախարար Արմեն Եղիազարյանը, խորհրդարանի դատին ներկայացված այդ պայմանագրերը առաջինն են, որ ոչ թե սպառման հարցերի, այլ տնտեսության խթանման խնդիրների լուծմանն են ուղղված:

Եւ թեեւ պատգամավորներն իրենց ելույթներում հիմնականում պայմանագրերի վավերացմանը կողմ էին արտահայտվում, բայց նշում էին նաեւ, որ արդյունավետության տեսանկյունից որոշակի կասկածներ ունեն: Հավանաբար դա է պատճառը, որ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի կողմից տրվող 12 միլիոն ԱՄՆ դոլլարի վարկը վավերացվեց սահմանային կողմ ձայներով՝ 125: Հրազդանի ՊՇԷԿ-ի հարցում պատգամավորները տարաձայնություններ չունեին: Հ. Պ.

## Հայ-վրացական երկկողմ պայմանագիր

Երեկ Երեւանի կառավարական հյուրատանը Հայաստանի ներքին գործերի նախարար Վանո Սիրադեղյանը եւ Վրաստանի ներքին գործերի նախարար Թեյմուրազ Խայբուլին ստորագրեցին համաձայնագիր հանցագործության դեմ պայքարի բնագավառում Հայաստանի եւ Վրաստանի ներքին գործերի նախարարությունների միջեւ համագործակցության մասին: Այդ մասին հաղորդեց ՀՀ ՆԳՆ մամուլի ծառայության ղեկավար եւ նախարարի օգնական Թաթուլ Սաֆարյանը:

Անդրադառնալով այսօր առավոտյան ժամը 9:30-ին Երեւանում բացվելիք հանրապետությունների ներքին գործերի նախարարների հանդիպմանը, նա նշեց, որ բացի Ադրբեջանից եւ Լիտվայից, Հայաստան են ժամանելու նախկին Խ. Միության մնացած 12 հանրապետությունների ՆԳՆ նախարարները կամ նրանց տեղակալները: Հանդիպման մասնակիցները կքննարկեն եւ կընդունեն ներքին գործերի նախարարությունների միջեւ օպերատիվ ծառայողական գործունեության տեխնիկա կրիմինալիստական ապահովման բնագավառում համագործակցության մասին համաձայնագրեր: Պրն. Սաֆարյանի ասելով, համաձայնագիրն ավելի շատ գործնական նշանակություն կունենա Հայաստանի համար, քանի որ մեզ մոտ հանցագործությունը կատարած անձանց հետապնդումը կկատարվի նաեւ վերը նշված հանրապետություններում, ինչը կօգնի Հայաստանի ՆԳՆ-ին հատուկ ջանքերով գտնել հանցագործներին: Ա. Հ.

Էկոնոմիկա

# ԳՐԱՉՈՎԸ ՊՆԴՈՒՄ Է ՂԱՐԱԲԱՂԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես արդեն հաղորդել ենք, Անկարայում հնգօրյա այցով գտնվող Ռուսաստանի պատգամավորության նախագահ Պավել Գրաչովը շարունակում է բանակցությունները Թուրքիայի բարձրաստիճան պատասխանատուների հետ: ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալության հաղորդման համաձայն, Թուրքիայի ազգային պատգամավորության նախագահ Նեվզաթ Այազի հետ հանդիպման ժամանակ Գրաչովը հայտարարել է, թե Ռուսաստանը պատրաստ է համագործակցել Թուրքիայի հետ ռազմական բոլոր բնագավառներում:

Նրա ասելով, չնայած գործադրած ջանքերին, դեռեւս չի հաջողվել գտնել հայ-ադրբեջանական հակամարտության լուծումը: Գրաչովի կարծիքով, դրանում մեղավոր են երկու կողմերը: Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղի կարգավիճակին, ապա Գրաչովի կարծիքով, այդ հարցը պետք է որոշվի համաշեղ բանակցությունների ընթացքում: Միաժամանակ, Գրաչովը մատնանշել է, թե Ռուսաստանին անհանգստացնում է այն փաստը, որ դրսը երկրներ Ադրբեջանին մատակարարում են ռազմական տեխնիկա եւ զինամթերք:

Պարզ չէ, թե ինչպիսի մեկնաբանություն է տվել թուրքական կողմը այդ անհանգստությանը, հատկապես, երբ հաշվի առնենք այն իրողությունը, որ ըստ Ն. Այազի կատարած հայտարարության, կողմերը պետք է ճնարկեին երկկողմ ռազմական համագործակցության հնարավորությունները, որոնք բխում են 1992 թվականի մայիսին ստորագրած պայմանագրից:

Իսկ «Անատոլու» գործակալության հաղորդման համաձայն, դեռ մարտի 19-ին ռուս-թուրքական պայմանագրով Թուրքիան Ռուսաստանից պետք է գներ 75 միլիոն դոլլարի արդիական զենք, վճարելով 15 մլն դոլլար:

Անդրադառնալով ռուս-թուրք-ամերիկյան եռակողմ միջնորդությանը, Պավել Գրաչովը հայտարարել է, թե այդ հարցը պետք է լուծվի խաղաղ նախաձեռնության պայմաններում Ադրբեջանի, Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի մասնակցությամբ:

Եւ մինչ ռուս-թուրքական բանակցությունները շարունակվում են Անկարայում, դրանց զուգահեռ տեղի են ունենում հայ-թուրքական եւ հայ-ադրբեջանական հեռախոսազրույցներ: Ըստ էության, Տեր-Պետրոսյանի հեռախոսազրույցները Դեմիրելի եւ Էլչիբեյի հետ խոսում են այն մասին, որ Ռուսաստանի հետ որեւէ պայմանավորվածություն ձեռք բերելուց առաջ Թուրքիան խորհրդակցություններ է անցկացնում նաեւ Հայաստանի հետ, վերջինիս դիրքը ճշգրտելու նպատակով: Ա. Հ

Թուրքիա

## ԼԱՉԻՆԻ ՄԻՋԱՆՑՔԸ ԿՐԿԻՆ ՀՐԵՏԱԿՈՇՎԵԼ Է

*Հրետակոծվել են նաեւ Խաչիկ եւ Արենի գյուղերը*

Երեկ եւ նախորդ գիշեր Լեռնային Ղարաբաղի ռազմաճակատներում մարտական լայնածավալ գործողություններ չեն ընթացել: Արդեն շուրջ մեկ շաբաթ է, ինչ կողմերը ձեռնպահ են մնում վճռական գործողություններից: Այս մասին Ստեփանակերտից հաղորդում է մեր թղթակից **ՎԱՀՐԱՄ ԱՂԱՋԱՆՅԱՆԸ՝** վկայակոչելով ԼՂՀ ինֆնաղաբտպանության կոմիտեից ստացված տեղեկությունները: Մայիսի լույս 11-ի գիշերը իրադրությունը լարված է եղել միայն Լաչինի մարդասիրական միջանցքի հարավային մասույցներում, որտեղ ադրբեջանական կազմավորումները Ղուբաթլիի շրջանի ռազմական հենակետերից հրետակոծել են միջանցքը վերահսկող ԼՂՀ ինֆնաղաբտպանության ուժերի դիրքերը: Հայկական ուժերը ստիպված են եղել պատասխան կրակ բացել: Մեր կողմից տուժածներ չկան: Գորիս-Լաչին-Ստեփանակերտ ճանապարհը գործում է անխափան: ԼՂՀ զինված ուժերի հրամանատարության կարծիքով, ադրբեջանական կողմը վերջին օրերի հարաբերական հանգիստն օգտագործում է ուժերի վերադասավորման եւ տեխնիկայի համալրման նպատակով:

Իրենց հերթին ադրբեջանական աղբյուրները հաղորդում են, թե իբր երեկ եւ նախորդ գիշեր Ղարաբաղի տարածքից գնդակոծվել եւ հրետակոծվել են ինչպես Աղդամ եւ Ֆիզուլի շրջկենտրոնները, այնպես էլ Ղուբաթլիի շրջանը, որի հետեւանքով կան մասնակի ավերածություններ: Տուժածների մասին տեղեկություններ չեն հաղորդվում:

Մայիսի 10-ի երեկոյան Նախիջեւանի տարածքից տանկերից եւ հետեւակի մարտական մեքենաներից հրետակոծվել են Եղեգնաձորի շրջանի Խաչիկ եւ Արենի գյուղերի հայկական պատասխանական դիրքերը: Հրետակոծությունը դադարել է միայն այն բանից հետո, երբ հայկական ուժերը ստիպված են եղել դիմելու պատասխան համարժեք գործողությունների: Հայկական կողմից տուժածներ չկան: Այս մասին հաղորդում են Հայաստանի պատասխանության նախարարության լրատվական ծառայությունից:

Ինչպես երեկ տեղեկացանք Եղեգնաձորի շրջանից, ժամը 16-ի դրությամբ ՇԵված գյուղերի պատասխանական դիրքերի գնդակոծությունը շարունակվում էր:

Նույն օրը՝ մայիսի 10-ին, Նախիջեւանի ռազմական հենակետերից երկու ժամ շարունակ գնդակոծվել են նաեւ Արարատի շրջանի Սեւակավան գյուղի պատասխանական դիրքերը: Այս մասին հաղորդում է Նոյյան տապան գործակալությունը: Հայկական ուժերը պատասխան կրակով ստիպել են թշնամուն դադարեցնել գնդակոծությունը: Միաժամանակ, ըստ նույն աղբյուրների, ընդմիջումներով փոխհրաձգություն է տեղի ունեցել Իջեւանի շրջանի Կիրանց եւ Բերքաբեր գյուղերի սահմանամերձ գոտում: Այստեղ նույնպես հայկական կողմից տուժածներ չկան:

Ադրբեջանական աղբյուրները հաղորդում են, թե վերջին երկու օրերի ընթացքում Հայաստանի տարածքից, զենքի տարբեր տեսակներից գնդակոծվել եւ հրետակոծվել են Ադրբեջանի Ղազախի, Թռուզի, Զանգելանի եւ Ղուբաթլիի շրջանները, ինչպես նաեւ Նախիջեւանի մի շարք սահմանամերձ բնակավայրեր: Մանրամասնություններ չեն հաղորդվում:

«Ազգ»

Էջմիածին

## Հրադադարը խախտվեց իսլամ-խորվաթ ճակատում

Նախորդ գիշեր համաձայնեցված հրադադարը հարավային Բոսնիայում բռնկած նոր՝ իսլամ-խորվաթ ճակատներում երեկ խախտվեց: Պատասխանատու դաշնակից երկու ազգությունների մարտիկները շարունակեցին լայնածավալ ռազմական գործողությունները միմյանց դեմ, մինչ իսլամ-սերբական ճակատները մնացին հարաբերաբար հանգիստ: ՄԱԿ-ի խաղաղարար ուժերի ուկրաինական զորախումբը երեկ փորձում էր կարգուկանոն հաստատել մեծամասամբ հրդեհված ժեպա քաղաքում, որտեղ ըստ վկայությունների, «մարդկային աղետ» է պատահել, իսկ ՄԱԿ-ի պատասխանատուները հարց են տալիս, թե խորվաթների կողմից կիրակի օրը հարձակման ենթարկված Մոստար քաղաքի բնակիչները որտեղ են անհետացել: Մյուս կողմից, նախագահ Քլինթոնը դեռեւս խորհրդակցում է Բոսնիա ամերիկյան զորք ուղարկելու կարելիությունների մասին: Հարցաքննվելով սերբերին օդային հարվածներ հասցնելու կապակցությամբ, ԱՄՆ նախագահը հույս հայտնեց, որ դեռեւս միջոց կգտնի դրա «սոսկալի հետեւանքներից» խուսափելու համար:

## Իսրայելցիները եւ պաղեստինցիները պատրաստում են համատեղ հայտարարություն

Իսրայելը երկուշաբթի օրը բարի կամի քայլ արեց Վաշինգտոնի բանակցություններում արաբական կողմի նկատմամբ, եւս 25 տարագիր պաղեստինցիների թույլատրելով հայրենիք վերադառնալ, հաղորդում է Ասոշիեյթդ Պրեսը: Սակայն բուն բանակցությունները դժվարանում են, քանի որ Պաղեստինի պատվիրակությունը 12-ի փոխարեն նիստի է ուղարկել միայն 3 պատվիրակի, բողոքելով Հորդանան գետի արեւելյան ափին եւ Գազայի հատվածում Իսրայելի կողմից մարդու իրավունքների շարունակվող խախտումների դեմ: Միաժամանակ Իսրայելի պատվիրակությունը վերսկսել է քննարկումները, որոնցում շարունակվի առաջնթացը այնպիսի հրատապ հարցի առթիվ, ինչպիսին է գրավյալ հողերում ապրող 1.7 մլն պաղեստինցի արաբների ինքնակառավարումը: Իսրայելը եւ պաղեստինցիներն այժմ զբաղված են համատեղ հայտարարության մշակմամբ, որը կսահմանի բանակցությունների նպատակները եւ ինքնակառավարման սկզբունքների տարրերը:

ԱՐՍԵՆՊՐԵՍ-ԻՏԱՌ-ՏԱՍՍ

**Շեւարդնաձեն վստահ է, որ Աբխազիայի պատերազմը շուտով կավարտվի:** Վրաստանի ղեկավար Էդուարդ Շեւարդնաձեն վստահություն է հայտնել, որ Աբխազիայի պատերազմը «շատ շուտով» կավարտվի: Այնուհետեւ Վրաստանը կդառնա շրջանում խաղաղության հաստատման եռանդուն մասնակից եւ երաշխավոր, ասել է նա երկուշաբթի օրը Թբիլիսիում Կարմիր Խաչի միջազգային կոմիտեի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ: Շեւարդնաձեի խոսքերով, Աբխազիայի հակամարտությունը ոչ թե էթնիկական է, այլ քաղաքական: Դրա կարգավորման մեջ, ընդգծել է նա, կարեւորագույն դեր կխաղան մայիսի 14-ին Մոսկվայում նախատեսված ռուս-վրացական բարձր մակարդակի բանակցությունները: ԻՏԱՌ

## Աղետալի հրդեհ Բանգկոգում

Երեկ աղետալի հրդեհ պատահեց Թաիլանդի մայրաքաղաքի խաղալիքի գործարաններից մեկում. հրդեհից փլված պատերի տակ մահացան 200 հոգի, որոնց թվում երեխաներ, որոնք խնամող չունենալու պատճառով իրենց մայրերի կողմից բերվել էին աշխատանքի: Երեկոյան տեղի զանգվածային լրատվության միջոցները մեղադրեցին օտարերկրացիներին, որոնք տեղացիներին մղում են ցածր ինքնարժեքով արտադրանք տալ, որի պատճառով վերջին ներն անփույթ են վարվում աշխատանքային անվտանգության կանոնների հետ: Նույն գործարանում, որտեղ փախուստի ելքեր չկային, նախապես 4 անգամ հրդեհ էր պատահել: ■

Հասարակություն

## Բեռավոր տիֆ Վարդենիսում

Որ օրերը տարանալու հետ աշխուժանալու են ոչ միայն մարդիկ, այլ նաեւ զանազան հիվանդությունների բազիլները, անսպասելի չէր ոչ մեկի համար: Բայց որ այդ բազիլների գործունեությունը կսկսվի բեռավոր տիֆով...

Խմբագրությունն ահազանգ ստացավ, որ Վարդենիսի շրջանում արձանագրվել է բեռավոր տիֆի դեպք: Ահազանգը ճշտելու եւ մանրամասներին տեղեկանալու նպատակով եղանք ՀՀ առողջապահության նախարարությունում: Նախարարության սանիտարահամաճարակային վարչության պետի տեղակալ Ալեքսանդր Իսրայելյանը հաստատեց, որ իրոք Վարդենիսի շրջանում բեռավոր տիֆի դեպք արձանագրվել է: Վարակը բռնկվել է մոտ մի շաբաթ առաջ. Սոդի հոգեբուժական հիվանդանոցում: Մեկ հոգու հիվանդությունը հաստատված է, երկուսինը դեռեւս կասկածելի է, բայց նրանք հետազոտվում են, եւս 2-3 հոգի լրացուցիչ հետազոտության են ենթարկվում: Հիվանդությունն ի հայտ է եկել հաղորդակցությունների (կոմունիկացիաների) անբավարար գործունեության, սանիտարահիգիենիկ սուղ պայմանների ու այլ աննպաստ վիճակների հետեւանքով: Ներկայումս հիվանդները մեկուսացված են, բժիշկների ձեռնարկած միջոցներով ամեն ջանք գործադրվում է բուժումն իրականացնելու եւ հիվանդության հետագա տարածումը կանխելու համար:

▶ տես էջ 2

digitised by A.R.A.R.@

Մամուլի

# ԲՈՒԱՎՈՐ ՏԻՊ ՎԱՐԴԵՆԻՍՈՒՄ

Սկիզբը էջ 1

Վերջին անգամ, ըստ ոմն, Իսրայելյանի, բծավոր տիպի դեղը մեր հանրապետությունում գրանցվել է տասնյակ տարիներ առաջ: Իսկ Վարդենիսի երջանի դեղը եզակի բնույթ է կրում այդ ժամանակներից ի վեր, մնայում եզակի: Որովհետև... վարչության ղեկի տեղակալը նշեց, որ դեղը իրենց համար անսպասելի չէր, քանզի ողջ հանրապետությունում համաճարակների բռնկման նախադրյալներ կան:

Եվ այս սահազանգը լուրջ մտածելու տեղիք դեռ է տա ոչ միայն առողջապահության բնագավառի աշխատողներին, այլ նաև նրանց, ովքեր թեկուզեւ անուղղակիորեն կաղված են այդ համաճարակների բռնկման դաշտաների հետ:

Համաճարակային հիվանդությունները եւ մասնավորապես բծավոր տիֆը ոջիլի ու քոսի ակտիվացման ու բազմացման հետ են անմիջականորեն առնչվում: Իսկ այդ ամենը գալիս է անձնական հիգիենայի աղահովման դայմանների բացակայությունից: Եվ եթե ձմռան գրտերին մարդկանց՝ տեղից տեղ գնալու, տեղաշարժվելու ցանկության հետ նկատում էին նաև համաճարակների հարուցիչ բացիլները, եղանակների տաքացումն ստեղծում է դրանց ի հայտ գալու եւ փոխանցվելու բոլոր դայմանները:

Դրն. Իսրայելյանը մտավախություն հայտնեց նաև, որ եթե չլուծվեն անձնական հիգիենայի աղահովման դայմանների հարցերը, ապա այդ հնարավորությունները ավելի իրական տեմ կստանան:

Բոլոր տարիքի մարդկանց սեռական ոլորտը դառնում է միատեսակ ու վիտամինների դակարտություն է առաջացնում: Առավոր ձմեռ անցկացրած մարդու օրգանիզմը, որ առանց այդ էլ հյուծվել է, եւս մի հարված ստանալով ավելի է բալանում, կորցնում դիմադրողականությունը: Իսկ օրգանիզմի դիմադրության անկումն ամենալայն հնարավորություններն է ստեղծում հիվանդության բացիլների տարածման համար:

Օրերի տաքանալը ջերմության հետ բերում է նաեւ համաճարակի վտանգ: Ձմռանը չնայած ջրմուղ-կոյտոյտ վքարների հետ կաղված առանձին դեղերին, նման բռնկումներ չկային, որովհետեւ բացի վիրուսների «անգործությունից», մարդիկ եւս քիչ էին տեղաշարժվում, այցելում իրար, աշխատանքի գնում: Այժմ դրա հնարավորություններն ավելի շատ են, բնականաբար, ավելի մեծ է համաճարակի հավանականությունը:

Մինչդեռ, մի համաճարակի վերացման վրա տասնյակ անգամ շատ միջոցներ են ծախսվում, հաճախ ավելի դարձ դատերազմի: Մենք համաճարակի աննշան ազդակ ենք ստացել միայն, աննշան այն իմաստով, որ այն գուցե մի տեղում է ու ոչ մեծ տարածմամբ: Սակայն աննշան չէ այդ ազդակի բծավոր տիֆի նախադրյալների գոյությունը, ընդ որում, ոչ ոք աղահովագրված չէ այդ հիվանդությամբ վարակվելուց, ներառյալ նաեւ հանրապետության դեկավարությունը: Եվ դեռ է որ այդ ազդակն ազդի նրանց վրա:

Գ. Ն.

Ստեփանակերտ

# Արկադի Ղուկասյան. ԼՂՀ դիրքորոշումը համադատասխանում է ԵԱՀԽ սկզբունքներին

Ստեփանակերտ, 11 մայիս, Սնարք: «Թուրքիայի, ԱՄՆ-ի եւ Ռուսաստանի եռակողմ նախաձեռնությունը մի շարք անհամադատասխանություններ ունի ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 822 բանաձեւի հետ: Ուստի այդ երկրների առաջարկած միջոցառումների գրաֆիկը կարոտ է լուրջ ճշգրտման», մայիսի 11-ին Սնարքի բդթակցին հայտարարեց ԼՂՀ Պաշտպանության դեսական կոմիտեի (ՊՊԿ) նախագահի արտաքին քաղաքական հարցերի գծով խորհրդական Արկադի Ղուկասյանը: Նրա խոսքերով, Անվտանգության խորհրդի բանաձեւում Քելբաջարի հարցը դիտվում է համադարփակ հրադադարի աղահովման համատեքստում, մինչդեռ Թուրքիայի, ԱՄՆ-ի եւ Ռուսաստանի ներկայացրած փաստաթղթում զորքերի դուրս բերումը դիտվում է որդես բանակցություններ սկսելու նախադայման: Իսկ դա հենց այն է, ինչին մշտադես ձգտում է հասնել Ադրբեջանը, որդեսզի ձախողի հակամարտության խաղաղ կարգավորումը եւ փորձի Ղարաբաղի հարցը լուծել ռազմական ուղիով, ընդգծեց Արկադի Ղուկասյանը:

Այս կաղակցությամբ ԼՂՀ ՊՊԿ նախագահի խորհրդականը հիշեցրեց վերջերս Բաքվում կայացած բրիֆինգում Ադրբեջանի նախագահի մամուլի ծառայության դեկավար Արիֆ Ալիեւի հայտարարությունը: Եթե հայկական զորքերը դուրս չբերվեն Քելբաջարի երջանից, ասել էր Ալիեւը, ապա Ադրբեջանը չի մասնակցի բանակցություններին:

Ղուկասյանի կարծիքով, դա ոչ այլ ինչ է, քան վերջնագիր, որը չի կարող ընդունել իրեն հարգող որեւէ դետություն, այդ թվում նաեւ Լեռնային Ղարաբաղը:

Չմերժելով խաղաղասիրական նախաձեռնություններից որեւէ մեկը, Լեռնային Ղարաբաղի դեկավարությունը դրա հետ մեկտեղ գտնում է, որ այդ նախաձեռնությունները դետք է հավասար չափով հաշվի առնեն բոլոր կողմերի շահերը, շարունակեց Ղուկասյանը: ԼՂՀ-ի համար այժմ գլխավորն է ստանալ Լեռնային Ղարաբաղի եւ իր ժողովրդի անվտանգության հասկ երաշխիքներ: Ինչ վերաբերում է բանակցություններին, դրանք դետք է սկսվեն առանց որեւէ նախադայմանի, որի օգտին հանդես է գալիս Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, եւ որը լիովին համադատասխանում է ԵԱՀԽ սկզբունքներին, վերջում նշեց Արկադի Ղուկասյանը: ■

Դատական

# ՀՀՇ-ն դատական գործ է հարուցում ՀՌԱԿ-ի դեմ

Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցության Հանրապետական վարչությունը դատական ծանուցագիր է ստացել Երեւան քաղաքի Մյասնիկյանի երջանային ժողդատարանից, որը հրավիրում է ՀՌԱԿ Հանրապետական վարչությանը եւ «Ազգ» բերթին մայիսի 25-ին, ժամը 11-ին դատապատասխանելու հայցվորի Հայոց համազգային շարժման վարչության կողմից կատարված հայցադիմումին: ՀՀՇ վարչության նախագահ Տեր Հովսեփին: Լազարյանն իր ստորագրած հայցադիմումի մեջ գրում է, թե 1993 թ. ապրիլի 20-ին «Ազգ» օրաբերը «Իրավ ժողովրդավարության դիրքերից» վերնագրով տդագրել է ՀՌԱԿ Հանրապետական վարչության քաղաքական զեկուցումը, «որում կան զրդարտչական եւ վիրավորական բնույթի արտահայտություններ» ՀՀՇ-ի հասցեին: «Քաղաքական կոչված զեկուցման մեջ, գրում է ՀՀՇ վարչության նախագահը, ՀՌԱԿ Հանրապետական վարչությունը, փորձելով վարկաբեկել մեր կազմակերդությունը, մի շարք կեղծ եւ ապակողմնորոշիչ հայտարարությունների հետ միաժամանակ դնդում է, թե մեր կազմակերդությունը, տիրելով զորքդիր իշխանության լծակներին, համագործակցել է ապահաղաքականացված սովետական *(«Ազգ»-ը գրել էր «նախկին սովետական»- խմբ.)* էկոնոմիկայի ներկայացուցիչների եւ, երբեմն, նույնիսկ հանցագործ տարրերի հետ»: «Այս դնդումները գտնելով կեղծ եւ զրդարտչական», ՀՀՇ վարչության նախագահը ժողդատարանից խնդրում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսդրությանը համադատասխան լճնել «սույն հարցը եւ դարտավորեցնել դատասխանողներին դատաշնանս հերքել իրենց զրդարտությունները»:

Այս կաղակցությամբ ՀՌԱԿ-ի դիրքորոշման մասին հավելյալ դարզաբանություններ ստանալու նդատակով խմբագրությունը դիմեց ՀՌԱԿ կենտրոնական գրասենյակ, որտեղից տեղեկացրին, թե Հանրապետական վարչության առաջիկա նիստերից մեկում կքննարկվի հարցը եւ հետագայում հատարակությունը տեղյակ կդահվի:

«Ազգ»

**ԼՂՀ մայրաքաղաքում բացվեց «Հայաստան» համահայկական հիմնադրամի ներկայացուցչություն:** Ինչդես Սնարքին հայտնեցին ԼՂՀ լրատվության եւ մամուլի վարչությունում, այդ կազմակերդության հիմնական խնդիրը նյութական օգնության հատկացումն է ԼՂՀ տնտեսական համալիրի, ավերված արտադրական ու տնտեսական օբյեկտների վերականգնմանը: Այս կաղակցությամբ, ներկայացուցչության դեկավար Նարա Պետրոսյանի խոսքերով, ներկայումս Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի կառավարությունները մշակում են ԼՂՀ արդյունաբերության, ագրարային հատվածի, շինարարության, էներգետիկայի, տրանսդորտի զարգացման համալիր ծրագիր:

# Դատավարությունն ընդհատվեց անորոշ ժամանակով

ՀՀ Գերագույն դատարանում արդեն մի քանի երկարագումներով ընդհատվող մասիսցի դոյրոցականների տալանության գործով դատավարությունը երեկ շարունակվեց ու նորից հետաձգվեց: Մի քանի վկաների լսելուց հետ երեկվա նիստն ավարտվեց, իսկ դատավարությունը կշարունակվի անորոշ ժամանակ հետո, մինչեւ որ կարգավորվի գործով մյուս վկաների դատարանի դահլիճ ներկայանալու հարցը:

«Ազգ»

Գիտություն

# Լեյլա Յունուսովան հայկական գործակա՞լ

Ադրբեջանական «525 այա գազետա» բերթը նյութ է տդագրել Ադրբեջանի դաշտդանության նախարարության լրատվական-վերլուծական կենտրոնի նախկին դեկավար Լեյլա Յունուսովայի մասին: Հոդվածում ասվում է. «Լեյլա խանումի թիմը, որը բաղկացած էր 5-6 հոգուց, չէր կատարում իր ծառայդրական դարտականությունները: Նրանց նդատակը ռազմածակատին եւ դետությանը ծառայելը չէր: Նրանց հայտարարությունների մեծ մասը սուտ էր: Օրինակ, տեղեկությունն այն մասին, թե Զանգելանում 50 հայ է սդանվել, սուտ է եղել: Իր գործունեությամբ Լեյլա Յունուսովան բանակում հոռետեսական տրամադրություններ էր ստեղծում: «525 այա գազետա» բերթի մարտ ամսվա համարներից մեկում Լեյլա Յունուսովան անկեղծությամբ ասել է, որ զինվորներն ու սդաները ոչ ոքի չեն հավատում եւ կորցրել են հույսն ու հավատը հաղթանակի նկատմամբ: Նա այդ դի տավորյալ է արել, չափից դուրս տարվելով ինքնառեկլամով: Վերլուծելով բանակում տիրող հոգեբանական իրավիճակը եւ այն ներկայացնելով բերթի էջերում, դրանով իսկ նա փորձել է կորցրել զինվորների եւ սդաների ռազմական ոգին, տատանել ժողովրդի տոկունությունը: Այս ամենն, առնվազն, կարելի է որակել որդես ծառայություն հայկական հետախուզությանը»: ՆՏ

# Մոսկվայում անց են կացվելու ադրբեջանական մշակույթի օրեր

1993 թ. Ադրբեջանի եւ Մոսկվայի կառավարության միջեւ տնտեսական, գիտատեխնիկական եւ մշակութային համագործակցության համաձայնագրի սկզբունքների համաղատասխան 1993 թ. մայիսի 17-22-ը Մոսկվայում անց են կացվելու Ադրբեջանի մշակույթի օրեր: Մոսկվայի քաղաքաղետ Յուրի Լուժկովի կարգադրությամբ մշակույթի քաղաքային կոմիտեին է հատկացվելու 10 մլն ռուբլի՝ ավտոտրանսդորտի, հասարակային դահլիճների եւ հարթակների վարձակալության եւ «Ադրբեջանի մշակույթի օրերի» մասնակիցների ժամանակավոր բնակության ծախսերը ծածկելու համար: ՆՏ

# Նշանակվել է ներքին զորքերի հրամանատար

Ադրբեջանի ՆԳՆ ներքին զորքերի հրամանատար է դարձել Ֆահմին Հաջիեւը, որն արդեն տարբ մեկ տարի կատարում էր այդ դարտականությունները: Նրա նշանակման մասին հրամանագիր է ստորագրել նախագահ Աբուլֆազ Էլչիբեյը: Ինտերֆաքսին տված հարցազրույցում Ֆ. Հաջիեւը հայտարարեց, որ ներքին զորքերի ամենագլխավոր դարտականությունները են հանրապետությունում կայունության եւ անդորրի վերահաստատումը, երկրի քաղաքացիների անվտանգության աղահովումը, դայքարն ահաբեկչական խմբերի դեմ: Նրա խոսքերով, Ադրբեջանի ներքին զորքերը չեն մասնակցում Լեռնային Ղարաբաղի մարտերին, սակայն կարող են մասնակցել Ադրբեջանի Ազգային բանակի առանձին գործողություններին: ԻՖ

Դեղագիտություն

# Մանկական սեռունդը տեղ հասավ

Ֆրանսիական կարմիր խաչի կողմից Հայաստանին տրամադրված մարդասիրական օգնությունը Ադրբեջանի տարածում ավելի քան 6 ամիս մնալուց հետո վերջապես տեղափոխվեց Ռուսով: Նախատեսված 1000 տոննա մանկական սեռնդից մնացած մոտ 800 տոննան միայն Ռուսովից վերջերս Երեւան բերվեց 26 օդանավով, 12 օրվա ընթացքում: Առաջին քանակաբաժինների բաշխումը Երեւանի բնակչությանը կավարտվի մինչեւ այս շաբաթավերջը, իսկ հանրապետության մյուս երջանների համար՝ առաջիկա շաբաթ: Առողջապահության նախարարության հաշվարկներով այն կբավարարի հանրապետության 2.5-3 ամսվա մանկական սեռնդի դահանջարկը: Բաշխումը կկատարվի ներկայիս գործող մեխանիզմով՝ այն կտրվի դե՛դաներին, դեղատոմսերով բաց թողնվելու համար: ■

digitised by A.R.A.R.@

Հարցազրույց

# ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԸ ԵՐՋԱՆԻԿ ՄԱՐԴ

**Անցյալ տարվա երկրորդ կեսից դարաբաղյան խնդրի վերաբերյալ դիվանագիտական բանակցությունների եւ գագաթաժողովների կենտրոնը Հոսմից, Մոսկվայից եւ Վաշինգտոնից տեղափոխվեց Թուրքիա:**

Այդ տեսակետից 1993 թ. ապրիլն անցավ արդեն հանրահայտ խոսքերի նվագակցության տակ՝ «երջանկություն չեղավ, բայց դժբախտությունն օգնեց»: Թուրքիայի նախագահ Թուրգուտ Օզալի հուղարկավորության դաշտեսակական արարողությունն առիթ հանդիսացավ Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարների սենսացիոն հանդիպման համար:

«Ես երջանիկ եմ»: Հենց այսպես մեկնաբանեց իր վերջին հանդիպումը Բաքվի իր գործընկերոջ հետ Լեւոն Տեր-Պետրոսյանը: Բանն այն է, որ գալով իշխանության գլուխ, Աբուլֆազ Էլչիբեյը կտրականապես հրաժարվեց ընդունել Հայաստանի նախագահի հետ, դաշնաբաբանելով դիվանագիտական գործելակերպում ընդունված արտաքին գործերի նախարարների կողմից գագաթաժողովների նախապատրաստման անհրաժեշտությունը: Սակայն Բաֆֆի Հովհաննիսյանը եւ Դոֆիկ Ղասիմովը ոչ մի կերպ չկարողացան ընդհանուր լեզու գտնել: Այնուամենայնիվ, համաշխարհային դիվանագիտության տարեգիրներն Անկարայում անցյալ տարվա հանդիպումների ժամանակ նշեցին Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների աննախադեպ ջերմությունը:

Նախագահական դեկավարման մեծ փորձ ունեցող Տեր-Պետրոսյանն իր այն ժամանակվա ելույթում Էլչիբեյի նման վարագիծը փորձեց բացատրել նրա «քաղաքական անհասունությամբ»: Հակամարտական եղավ ադրբեջանական մամուլի արձագանքը: Բաքվի լրագրողներն անհրաժեշտ համարեցին երկու նախագահների առաջին այդ ջերմությունը գնահատել որպես խենց հանդուգնության դեկավարի դիվանագիտական ամենամեծ հաջողությունը. «Թշնամու հետ պետք է կարվել բնամարտ, տղամարդավարի արտահայտել ատելությունը նրա հանդեպ: Դրա համար կարելի է ավերել եւ կոտրել «դիվանագիտական բոլոր երջանկները», ընդունված բոլոր չափանիշները»:

Իրոք, Էլչիբեյի անցյալ տարվա դաշտեսակությունը նրա ողջ ժողովրդի դատաստանն էր, որ «բնամու հետ չեն խոսում, այլ մարտնչում» են: Այսուր, ինչպես գտնում են շատ դիվանագետներ, Ադրբեջանի նախագահը նահանջել է իր սկզբունքներից դարաբաղյան ռազմաճակատներում իրական ձախողումներից հետո: Ինքնաղաշտպանության հայկական ջոկատները միակողմանիորեն կանգնեցրին իրենց հաղթական գործողությունները, սահմանափակվելով Ադրբեջանի տարածքի տասներորդ մասի գրավումով: Բացի դրանից, Ադրբեջանի գեներալների հաղանումները հաստատ այն ասիճանի, որ ադրբեջանական բանակի ստորաբաժանումները չեն փորձում նույնիսկ հակահարձակվել:

Երեւանում հայկական կողմի դիտորդները նշեցին, որ Տեր-Պետրոսյան-Էլչիբեյ գագաթաժողովի ընթացքը կարող էր ավելի բարձր լինել Լեռնային Ղարաբաղի լիազոր ներկայացուցիչների մասնակցության դեպքում, որոնց Թուրքիա ոչ ոք չէր հրավիրել: Թեպետ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում «կա մի կարծիք», որ Լեւոն Տեր-Պետրոսյանի համար իմաստ կունենար Անկարա եւ Սամբուլ կատարած այցերի ընդմիջումներին մասնել Ստեփանակերտ այցելելու մասին:

Քչերին է հայտնի, որ անցյալ տարի Ղարաբաղի խորհրդարանի դեկավար Գեորգի Պետրոսյանը նախագահական աշխատակազմին էր հանձնել Լեւոն տեր-Պետրոսյանին Ղարաբաղ այցելելու հրավերը: Պատասխանելով «Մեգապոլիս-Էքսպրեսի» մեկնաբանի հարցին, թե ինչո՞ւ առաջին դեմքը ոչ մի կերպ ժամանակ չի գտնում այցելել ղարաբաղյան հակամարտության գոտի, Գեորգի Պետրոսյանն ասաց. «Մեր գործն է հրավիրել, իսկ գալ կամ ոչ՝ որոշում է ինքը նախագահը: Ընդհանրապես մենք պատրաստ ենք Ստեփանակերտում ընդունել բոլոր նրանց, ովքեր այս կամ այն կերպ առնչվում են ղարաբաղյան խնդրի հետ»:

Դիտորդների կարծիքով, եթե նրանք, ովքեր գործում են Ղարաբաղի ժողովրդի անունից, չդժվարանային 5 տարվա պատերազմի ընթացքում վերջապես այցելել Ղարաբաղ եւ սեփական աչքերով տեսնել այն, ինչ կատարվում է այնտեղ, հնարավոր է, որ ներկայումս հակամարտությունն այսքան խճճված եւ անլուծելի չլիներ:

1993 թ. գարնան վերջին լավատեսական ֆիչ բան կա, ինչպես անցյալում: Ինչպես գտնում է Ադրբեջանի արտաքին քաղաքական գերատեսչության դեկավար Ղասիմովը, «մոտակա մեկ-երկու տարում ղարաբաղյան հակամարտությունը, ըստ երեւույթին, այդպես էլ չի լուծվի»: Նա դա պատճառաբանում է Երեւանի «ոչ կառուցողական դիրքորոշմամբ»: Իսկ Հայաստանի նախագահի մամուլի նախկին քարտուղարը, որը վերջերս գործուղվել էր որպես դեսպան ԱՄՆ, հայտնեց, որ պատերազմը կավարտվի 1993 թ., իր կարծիքը բացատրելով հակամարտ երկու կողմերի ռազմական հավասարությամբ եւ ռազմական հյուծվածությամբ:

ՄԱՔՍԻՄ ՎՈԼՈՊԻՆ
«Մեգապոլիս-Էքսպրես»

Հարցազրույց

# Մտավորականները համախմբվում են

Մայիսի 7-ին Հրազդանի շախմատի տանը գումարվեց մտավորականների անդրանիկ ժողովը, որն իր առջեւ խնդիր դրեց մտավորականներին համախմբել մեկ միասնական կառույցի մեջ: Ժողովին մասնակցում էին գրողներ, նկարիչներ, երաժիշտներ, կրթօջախների տնօրեններ, ուսուցիչներ, քաղաքի ու շրջանի դեկավար անձինք:

Եղան քննարկումներ, բանավեճ ու առաջարկություններ: Ժողովականներից ոչ մեկը չշոշափեց «երիկի» ու «250 գրամ» հացի խնդիրները, այլ դժվարություններն ու համաստարած բանկությունը մի կողմ դրած, առավել կարեւորեց նոյատակադրվել հագեցնելու հասարակության գիտակցության մեջ խոր արմատներ գցած հոգեւոր սովը, որի գործած ավերածությունը շատ ավելի տխուր հետեւանքներ կունենա ժողովրդի բարոյական նկարագրի վրա: Ժողովում նշվեց, թե աղագա միությունը պետք է ուղղություն տա ժողովրդին, ուղեցույց հանդիսանա աճող սերնդի հոգեւոր ու մշակութային դաստիարակության գործում:

Ժողովում փորձ արվեց կուսակցական թեմում հաղորդել միությունը, սակայն մեծամասնությունը մերժեց դա:

Ի վերջո, բազմաթիվ ելույթներից հետո որոշվեց ստեղծել 12 հոգուց բաղկացած մի խորհուրդ, որը կգրաղվի կանոնադրության մշակմամբ, վարչահրավական հարցերով եւ հաջորդ հավաքին հաշվետվություն կներկայացնի կատարված աշխատանքի մասին:

Մի նկատառում. շատ կուզենայինք, որ միությունը չվերածվեր բյուրոկրատական մի մարմնի, որն զբաղվեր միայն արտոնություններ բաշխելով, կամ բարձրաստիճան հյուրեր ընդունելով ու պատվելով, այլ գործեր ի շահ տեղի ցավ ու ցրիվ մտավորականության, ի շահ ժողովրդի:

ՍԱՄՈ ՍԱՐԳՍՅԱՆ
«Ազգ»

Զրույց

# Նախագահը գնաց, իսկ ո՞ւր է կնիքը

«Լիված կոմիտեն փնտրում է իր նախագահին» եւ «Նախագահը գտնվեց, բայց նախագահ է պետք» նյութերով «Ազգը» անդրադարձել էր Սիյուռեմ հայության հետ կապերի կոմիտեում տիրող իրավիճակին, կազմված կոմիտեի նախագահի հրաժարականի հետ, եւ դրա հետ առնչվող իրադարձություններին: Իրազեկ աղբյուրներից մենք տեղեկացանք որոշ մանրամասների մասին, որոնք գուցե ինչ-որ կերպ կարողանան պատասխանել այն հարցին, թե ինչո՞ւ գնաց նախագահը: Նախ ասենք, որ նախագահի գնալուց հետո անհետացավ նաեւ կոմիտեի կնիքը: Գոնե գիտենք, որ նախագահը «այլ» աշխատանքի է անցնում ՀՀ ԳԱԱ-ում (ազգային ակադեմիայում), իսկ թե ո՞ւր է կնիքը, ասված գիտի: Մի բան պարզ է, որ Սիյուռեմահայության հետ կապերի կոմիտեի կնիքը ակադեմիայում ուժի մեջ չի կարող լինել:

Այժմ ներկոմիտեական հարցերի մասին: 1992 թ. արտասահման գործուղվեց կոմիտեի աշխատակից Առաքելյանը, որը նախագահի գիտությամբ կատարեց մի գործարք կոմիտեն Ֆրանսիայում ուներ որոշակի քանակությամբ դրամ, եւ նշված աշխատակիցն այդ դրամից Բելգիայում գնեց 6 մեքենա եւ դրանք վաճառեց Մոսկվայում, կոմիտեի համար: Այդ մեքենաների արդյունքից պարզվեց, որ ստացված գումարը (10 հազար դոլար) հազիվ փակում է կոմիտեի ծախսերը, այսինքն գործարքից ոչինչ չի փոխվում, ոչ մի օգուտ չի լինում:

Այնուհետեւ, 1992 թ. հոկտեմբերին կոմիտեն նորից Ֆրանսիայի իր փոխոնորդով Գերմանիայից գնեց 22 տոննա սուրճ, որն իրացվեց այստեղ, կոոպերատիվների միջոցով: Իրացումից հետո հայտնի դարձավ, որ ստացված գումարը՝ 22 հազար դոլար, նորից միայն ծածկում է կոմիտեի ծախսերը, այսինքն, ոչ մի շահույթ կոմիտեին չի գալիս:

Անհայտ է (համենայն դեպս մեզ), թե ով է օգտվել վերոհիշյալ գործարքներից, եթե կոմիտեն դրանից ոչ մի օգուտ չի ստացել:

Այնուհանդերձ, չի բացառվում նաեւ այն, որ կոմիտեի նախագահ Հրաչիկ Սիմոնյանը կոմիտեից գնաց նաեւ այս տիպ գործարքների տիպ կեսերի պատճառով: Առայժմ ընդամենը չի բացառվում: Իսկ հաստատելու կգան ժամանակը, դեպքերը եւ... այդ գործարքներին մասնակցած անձինք:

Գ. Ն.

# Սեւանն անտարբերությունը չի ների

**Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի հիդրոէկոլոգիայի եւ ձկնաբանության ինստիտուտի տնօրեն, կենսաբանական գիտությունների դոկտոր ՌԱՖԱՅԵԼ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ կարծիքով, Սեւանա լճի վերականգնման ժամանակաշրջանն անհնար է կանխատեսել:**

Էկոլոգիա

Նախ մի քիչ նախապատմություն, ասաց Հովհաննիսյանը: Լճի մակարդակի անկումից հետո տեղի ունեցան ներքին եւ արտաքին հիդրոէկոլոգիական փոփոխություններ, որոնք հանգեցրին բոլոր ֆիզիկաքիմիական եւ կենսաբանական երեւույթների ադեկայունացմանը: Սկսվեց էներգիայի կուտակում օրգանական նյութի տեսքով: Այդ երեւույթի գագաթնակետը դարձավ ջրի աղտոտումը միաբջիջ ջրիմուռներով: Տեղի ունեցան բույսերի եւ կենդանիների բոլոր տեսակների փոփոխություններ: Իշխանի լիճը դարձավ սիգի ջրամբար:

Այդ ժամանակ 70-ական թթ. կեսերին եւ վերջերին, կատարվում էին փոփոխությունների մեխանիզմի եռանդուն հետազոտություններ եւ արացուցվեց, որ արագորեն զարգացող այդ բացասական երեւույթները դադարեցնելու եւ Սեւանն իր բնական մակարդակին վերադարձնելու համար հարկավոր է նրա ջրերը բարձրացնել առնվազն 6 մետրով եւ վերանայել լճի ջրահավաք ավազանի սոցիալ-տնտեսական զարգացման ուղղություններն ու ինտենսիվությունը:

1985 թվականից սկսվեց այդ միջոցառումների իրականացումը եւ արդեն 1990 թ. լճի մակարդակը բարձրացավ գրեթե մեկ մետրով, ինչպես նաեւ վնասակար նյութերի մուտքը կրճատվեց 20-30 տոկոսով: Սկսվեց ներքին փոփոխակերպումների կայունացում եւ, որ կարեւոր է, երկու-երեք անգամ աճեց սիգ ձկան քանակությունը, եւ 15-20 տարում մենք կկարողանայինք Սեւանը վերադարձնել իր նախնական վիճակին (30-ական թթ. սկիզբ): Ցավոք, դա տեղի չունեցավ:

Վերջին ժամանակներս տնտեսական եւ էներգետիկ ճգնաժամի պատճառով սկսվել է լճի մակարդակի նոր արհեստական անկում: Մեր հաշվարկների համաձայն, օրական Սեւանի մակարդակը միջին հաշվով իջնում է 8 մմ-ով: Դրա հետեւանքով լճի մակարդակն արդեն իջել է 80-90 սմ-ով: Դա հանգեցրել է էկոլոգիական համակարգի նոր, ավելի խոր ապակայունացման, եւ այժմ Սեւանի վերականգնման ժամանակաշրջանն անհնար է կանխատեսել, մանավանդ եթե ջրի մակարդակը շարունակի իջնել նաեւ առաջիկա տարիներին: Իսկ նոր ձկնատեսակի, մասնավորապես ծածանի հայտնվելուց հետո անդայման կնվազի սիգի քանակությունը, եւ կբազմանան վնասակար ձկնատեսակները:

Ներկայումս հակամարտությունը եւ դադարեցնել ջրի արհեստական բացթողումները, իսկ սուր անհրաժեշտության դեպքում դրանք իրականացնել միայն ամռան ամիսներին, երբ նկատվում է օրգանական նյութի առավելագույն կուտակում: Լճի մեջ ազոտի ու ֆոսֆորի մուտքը կրճատելու համար պետք է կիսով չափ նվազեցնել ջրահավաք ավազանում համապատասխան պարարտանյութերի օգտագործումը եւ ոչ թե խոսքով, այլ գործով ամենավճռական պայքար ծավալել ձկնագողության դեմ:

- Ձեր կարծիքով, ի՞նչ պետք է ձեռնարկել ստեղծված իրավիճակը շտկելու համար:

- Ցավով պետք է արձանագրեմ, որ Հայաստանում բնապահպաններն օգտագործելիս միշտ անտեսվել են բնապահպանական հարցերը: Ավաղ, այդ ավանդույթն այսոր էլ շարունակվում է: Կարծում եմ, որ բնական միջավայրի նվազագույն խախտմամբ որեւէ աշխարհագրական շրջանի սոցիալ-տնտեսական զարգացումը կախված է էկոլոգիայի, էներգետիկայի եւ էկոնոմիկայի կապերի փոխադարձ կարգավորումը կառավարելու պետության ունակությունից: Այս բնորոշումը ես անվանում եմ «երեք է-երի օրենք», գտնելով, որ դրա հետեւանքն անհրաժեշտ է առաջին հերթին ամենաբարձր կարգի դեկավարների համար: Այդ օրենքի չիմացությունը եւ մանավանդ դրա յուրացումից հրաժարվելը, որպես կանոն, հանգեցնում է բացասական հետեւանքների: Այդպես պատահեց նաեւ Սեւանի հետ:

Գալիք սերունդների համար խմելու ջուր եւ արժեքավոր ձկնատեսակներ պարունակող մեր երկնագույն մարգարիտը պահպանելու համար հարկավոր է դադարեցնել ջրի արհեստական բացթողումները, իսկ սուր անհրաժեշտության դեպքում դրանք իրականացնել միայն ամռան ամիսներին, երբ նկատվում է օրգանական նյութի առավելագույն կուտակում: Լճի մեջ ազոտի ու ֆոսֆորի մուտքը կրճատելու համար պետք է կիսով չափ նվազեցնել ջրահավաք ավազանում համապատասխան պարարտանյութերի օգտագործումը եւ ոչ թե խոսքով, այլ գործով ամենավճռական պայքար ծավալել ձկնագողության դեմ:

- Ձեր առաջարկությունները կարող են մնալ բարի ցանկություններ, եթե լուծվեն պետական մակարդակով: Իսկ դրա համար պետք է ստեղծվի կայուն իրավական հիմք:

- Միանգամայն իրավացի եք: Հարկավոր է օրենք Սեւանի մասին: Հարկավոր է օրինականացնել լճի եւ դրա ջրահավաք ավազանի բնապահպանների օգտագործման չափանիշները եւ դրույքները: Այս առաջարկությամբ մենք հանիցս դիմել ենք վերադաս այյանքներին, ընդհուպ նախագահը, սակայն ամեն անգամ մեր նամակներն ուղարկվում են բնության եւ շրջակա միջավայրի պահպանության նախարարություն եւ այնտեղ թաղվում փոշոտ թղթերի կույտի մեջ: Մինչեւ ե՞րբ մեր օգնության ձիչը պետք է մնա ձայն բարբառո հանապատի:

Սեւանը դրա համար մեզ չի ների:

ՍՏԵՓԱՆ ՂԱՐԻԲՅԱՆ
Սնարք

## Հայաստանի առողջապահության ազգային ինստիտուտը

*Հանրապետության բժիշկներին եւ գիտնականներին հրավիրում է «Կյոր սեղանի» նիստերին, նվիրված Հայաստանի Հանրապետությունում առողջապահության զարգացման եւ բարեփոխումների հիմնահարցերին:*

Նախատեսված է ամփոփել քննարկումներ եւ բանավեճեր հետեւյալ խնդիրների վերաբերյալ.

**19 մայիսի.** Կլինիկական հիվանդանոցի եւ համալսարանական կլինիկայի կանոնակարգերը:

**1 հունիսի.** Հեղինակային մասնագիտական բժշկական կրթության հայեցակարգի բարեփոխումները Հայաստանի Հանրապետությունում:

**15 հունիսի.** Բժիշկների եւ առողջապահական հիմնարկների արտոնագրումը Հայաստանի Հանրապետությունում:

**29 հունիսի.** Ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայության բարեփոխումները Հայաստանի Հանրապետությունում:

**13 հուլիսի.** Հասարակական առողջության համակարգի ռեգիոնալ օղակի մոդելը:

«Կյոր սեղանի» նիստերի սկիզբը ժ. 15.00 ՀԱԱ-ի նիստերի դահլիճում: (Կոմիտասի փ. 49/4)

Մուտքն ազատ է: Մասնագետներն ստանում են մասնագիտական արտոնագրման համակարգում կիրառվելիք վկայագրեր:

«Կյոր սեղանի» առաջիկայում պատրաստվող նիստերի ցուցակը պարբերաբար կհրապարակվի:

ՀԱԱ-ի տնօրենների խորհուրդ

## Օգնություն Հունաստանից

ՀՀ առողջապահության նախարարության լրատվական կենտրոնից հաղորդեցին, թե մայիսի 9-ին Երեւան է հասել Հունաստանի Սալոնիկ քաղաքի հայկական համայնքի կողմից առաքված մարդասիրական օգնությունը փոխադրող օդանավը, 35 տոննա բեռով: Հանրապետության առողջապահական հիմնարկների եւ դրանցում բուժվող հիվանդների համար սահմանված այդ օգնությունը բաղկացած է ախտահանող հագուստեղենով օժտված լվացքի փոշուց, վիրահատված հիվանդների համար պատրաստված հագուստից եւ կաթի փոշուց:

Նույն համայնքի օգնությունը փոխադրող 2-րդ օդանավը Երեւան կժամանի մայիսի 14-ին, բերելով դեղորայք, սնունդ, նույնպես առողջապահական հիմնարկներում բուժվողների համար:

Առաջին անգամը չէ, որ Սալոնիկի փոքրաթիվ հայ համայնքը նման օգնություններ է կազմակերպում մայր հայրենիքի համար: ■

**Հայաստանի եւ Թաիլանդի բազմակողմանի միջեւ առեւտրատնտեսական հարաբերությունների հետագա զարգացում է ակնկալվում.** մայիսի 10-ին կայացած բրիֆինգում հայտարարեց ՀՀ կառավարության բանբեր Վ. Մանոյանը: Նախորդ շաբաթ Թաիլանդի հետ հաստատած դիվանագիտական հարաբերությունները առեւտրատնտեսական բնագավառում մեծ հեռանկարներ են թաքադրում: Արդեն պայմանավորվածություն է ձեռք բերվել Թաիլանդի կողմից Հայաստանին դարեւնային վարկ հատկացնելու մասին: Պարենամթերքը Թաիլանդից Հայաստան է բերվելու Իրանի տարածքով, վերջինիս հետ Թաիլանդը համապատասխան համաձայնություն ունի:

«Ազգ»

digitised by A.R.A.R.@

Հարց

# ՏԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ. ՀԱՐՑԵՐ, ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**«Կամ ջրհորն էր շատ խորը,**
**կամ նա ընկնում էր շատ դանդաղ,**
**միայն թե նա բավական ժամանակ ուներ,**
**որպեսզի ուշքի գար ու մտածեր,**
**թե ինչ է լինելու այնուհետև»:**

ԼՅՈՒԻՍ ՔԵՐՈԼ «Ալիսան հրաշքների աշխարհում»

Ոչ միայն մեր հայրենական, այլեւ համաշխարհային ողջ փորձն է վկայում սոցիալական խնդիրների կտրուկ, որակական բարդացումների մասին: Այդ նույն համաշխարհային փորձի համաձայն էլ նախանշանների միայն մի մասին արձագանքելով սոցիալ-տնտեսական խնդիրների լուծումները ստեղծում են անցանկալի հետեւանքների հանգեցնող իրադրություն: Հայրենական փորձը, այդ թվում եւ վերջին տարիների, լիովին հաստատում է ասվածը: Ստեղծվում է կախարդական շրջան, որտեղ փրկությանն ուղղված միջոցառումները միայն խորացնում են դժվարությունները: Ավելորդ չէ նշելը (թեեւ դա անմիջականորեն մեր հոդվածի թեմային չի վերաբերում), որ հենց այդ կախարդական շրջանի մեջ հայտնվեցին ռուսական բարեփոխումները: Նշանակում է՝ մերը նույնպես:

Այդ նույն ժամանակ համաշխարհային փորձից հայտնի են դեպքեր, երբ խորը ճգնաժամի վիճակում գտնվող երկրներում ազգային համաձայնության գալը հնարավորություն ընձեռեց դուրս գալ ճգնաժամից:

Սակայն հաշտաձայնության հասնելու համար հարկավոր է մշակել նոր մոտեցումներ, որն անհնարին է անել առանց ստեղծված իրավիճակի կանխատեսման օբյեկտիվ գնահատականի:

Հենց որպես այդ ուղղությամբ ձեռնարկված փորձ (հասցողված թե ոչ, թող դատի ընթերցողը) պետք է դիտել այս հոդվածը:

1. Նախ բերենք թվական մի շարք տվյալներ, որոնք բնութագրում են տարագրության երեւույթը: Դրանք հավաքել ու մեզ է տրամադրել պրոֆեսոր Վլադիմիր Գրիգորյանը:

Մեկ տարվա (1991-ի կեսից մինչեւ 1992-ի կեսը) ընթացքում ՀՀ արտգործնախարարության տվյալներով, արտաստիման («հեռավոր» արտաստիման) մշտական բնակության են մեկնել 16-18 հազար մարդ (2 հազար ԱՄՆ, 3-3,5 հազար Արեւմտյան Եվրոպայի երկրներ, 1,5-2,0 հազար այլ երկրներ, ներառյալ Արեւելյան Եվրոպան): ՕՎԻՐ-ի տվյալներով, որն անշուշտ համընկնում է ՊԱԿ-ի (այժմ ԱԱՊՎ) մեր տվյալներին, այդ կարգի մեկնողների թիվը 14,0-14,5 հազար է: Հարկավոր է նշել նրանց մեկնումն արգելակող առավել թույլ արժեքների հետեւանքով տարագիրների հոսքի կտրուկ աճը դեպի Գերմանիա:

Այնուհետեւ: ՀՀ-ում լրատվության եւ մշակութային կապերի գծով ԱՄՆ-ի դեսպանատան կցորդ Դեվիդ Սիֆկինի գնահատմամբ, ԱՄՆ գաղթի վերաբնակվածների թիվը արտոնությամբ մեկնածներից եթե ոչ ավելին, ապա պակաս չէ («Վրեմյա» թերթ, 1993թ., ապրիլ 2):

Հաշվի առնելով այս գնահատականը, ինչպես նաեւ համեմատաբար թեթեւ տարագրությունը Գերմանիա, կարելի է համարձակորեն հաստատել, որ Հայաստանից միայն «հեռավոր» արտաստիման տարագիրների քանակը հազիվ թե պակաս լինի 30-40 հազարից:

### Ռուսաստանի եւ հեռախորհրդային այլ հանրապետությունների վերաբերյալ տվյալները

Մեզ մոտ, Հայաստանում հրապարակված թվերի համաձայն, Ռուսաստան եւ հեռախորհրդային այլ հանրապետություններ մշտական բնակության մեկնածների թիվը մոտավորապես 1,5 անգամ շատ է «հեռավոր» արտաստիման մեկնածների թվից: Տարագրության այս նոր հսկայական հոսքի երեւան գալը (հետաքրքիր է, որ պրոֆեսոր Վլադիմիր Գրիգորյանից ստացած տեղեկությունների համաձայն, այս հոսքը բնութագրող թվերը ԱԱՊՎ-ում պարզապես չեն փաստագրվում) ամենեին էլ պատահական չէ:

Առաջին պատճառը ներհայկականի համեմատությամբ Ռուսաստանում կենսամակարդակի տարբերությունն է (մոտ 10 անգամ): Օրինակ, Հյուսիսային Կովկասում, ըստ մեր դիտարկումների ու գնահատականի, մթերքների գները 2-2,5 անգամ ցածր են, քան Հայաստանում, աշխատավարձն էլ մի քանի, ամենաքիչը՝ 5 անգամ բարձր: Որ դա հիրավի այդպես է, վկայում է նաեւ վիճակագրությունը. բոլոր հեռախորհրդային երկրների մեջ 1992 թ. նոյեմբերի դրությամբ ամենացածր աշխատավարձը (2243 ռ.) եղել է Հայաստանում, իսկ ամենաբարձրը՝ Ռուսաստանում (1311 ռ.): Ընդ որում, առավելագույն աշխատավարձը Ռուսաստանում նվազագույնից շատ էր 13, Ղազախստանում՝ 9, Բելառուսում՝ 3,6, Ուզբեկստանում՝ 2,3, Հայաստանում՝ 1,9 անգամ («ՌԱ», 22 ապրիլ, 1993 թ., էջ 2): Իսկ վերջին տվյալների համաձայն, Ռուսաստանում ամսական միջին աշխատավարձը հասել է 20 հազար ռուբլու (Ռուցկոյի ու Գայդարի միջեւ հեռուստաբանավեճ-տուրնիրը ապրիլի 19-ի երեկոյան):

Երկրորդ պատճառը համեմատաբար ավելի հեշտ (առայժմ) մեկնելու հնարավորությունն է Ռուսաստան եւ ԱՊՀ այլ երկրներ: Կարելի է տպասել, որ ծնելիության շատ կտրուկ անկման եւ ըստ երեւույթին մահացության ոչ պակաս կտրուկ աճի, սարսափելի տարագրության հետեւանքով Հայաստանի բնակչությունն սկսում է պակասել: Անուղղակիորեն այդ է վկայում նաեւ այն փաստը, որ տարագրության թվերը գաղտնիացված են. վերջին հրապարակվածներն են՝ 9 հազար «հեռավոր» արտաստիման, 13 հազար՝ նախկին ԽՍՀՄ տարածքում ստեղծված երկրներ:

2. Միտումները: ԱՄՆ-ի ու Կանադայի տարագրության ծառայությունները վաղուց են ուշադրություն դարձնում զարգացող երկրներից տարագրության լայն տարածում գտած երեւույթի վրա: Ժամանում է սկզբում մեկը, օրինակ, Պակիստանից: Բոլոր ճշմարտություններով ու ստերով (նույն ձեւական ամուսնությունը) հաստատվում է: Հետո արդեն լրիվ օրինական հիմունքներով կանչում է ազգականներին, սրանք մյուսներին եւ այսպես՝ շղթայաբար: Մեկ նախապես հիմնավորված արտաստիմանյան տարագրին հաճախ ընկնում է հարյուր եւ ավելի լիովին օրինական հիմունքներով տարագիր: Դա հանգեցնում է տարագրության վերաբերյալ պարբերական խստացումների, օրինակ, միայն անմիջական հարազատների հրավերի իրավունքի, քվոտաների եւ այլն:

Սակայն, ինչպես ասինանել են նույն Կանադայի տարագրության ծառայությունները, Կանադա մշտական բնակության ձգտողների երեք քառորդը ի վերջո «կորչում» է այնտեղ:

Կրկին դիմենք ՀՀ ԳԱ սոցիոլոգիական հետազոտությունների կենտրոնի այս տարվա մարտին բերած տվյալներին («ՌԱ», 21 ապրիլ, 1993 թ.), որոնց համաձայն, հարցվողների 18 տոկոսը կուզենային Հայաստանից գնալ ընդմիշտ, 17,9 տոկոսը՝ մինչեւ «լավ ժամանակների» գալը, 21,6 տոկոսը՝ 1-2 տարով, 12,7 տոկոսը՝ միայն ձմեռային 3-4 ամիսը: Եվ միայն 29,8 տոկոսն է պատասխանել, որ «չնայած ստեղծված դժվարություններին, ոչ մի դեպքում չենք գնա»: Նկատի ունենանք, որ տնտեսական դրությունը ՀՀ-ում չի խոստանում «լավ ժամանակների» շուտափույթ «ժամանում»: Ակնհայտ է, որ դրա հետեւանքով ընդհանրապես գնալ ցանկացողների թիվը կաճի թեկուզ նրանց հաշվին, որոնք կուզեին հեռանալ մինչեւ «լավ ժամանակների» գալը, իսկ վերջիններիս թիվը 1-2 տարով գնալ ցանկացողների հաշվին. այստեղով արդեն իսկ կարելի է փաստն արձանագրել՝ Հայաստանի բնակչության 1/2-2/3-ը հոգեբանորեն պատրաստ են տարագրման: Անգամ եթե չհաշվենք, որ շարունակվող «ցնցումային» իրադրության դեպքում հեռանկարի, ապագայի բացակայությունը չի պահի նաեւ հարցվածների այն 29,8 տոկոսից շատերին, որոնք պատասխանել են «չնայած ստեղծված դժվարություններին, ոչ մի դեպքում չենք գնա»: Կարելի է անմիջապես ցույց տալ բնակչության ոչ միայն տարագրության մյուսներից ավելի հոգեբանորեն պատրաստ խմբերը: Դրանք առաջին հերթին փախստականներն են. վերջին պաշտոնական տվյալների համաձայն, 320 հազար: Իսկ քանի՞սն են արդեն գնացել: Եվ քանի՞սը կգնան, եթե նկատի առնենք նրանց ինչպես սոցիալ-տնտեսական դրությունը, այնպես էլ նույն ԱՄՆ «մուտքի իրավունքի» համար տրված որոշակի ասոնությունները:

Մյուսը «արտագնաց-խողանչիների» խումբն է: Ըստ երեւույթին, նրանք ընտանիքի անդամների հետ փախստականներից քիչ չեն: Այնուհետեւ՝ գիտատեխնիկական մտավորականությունը: Իսկ նրանք ամենեին էլ ավելի քիչ չեն, քան առաջին երկու խմբերի ներկայացուցիչները միասին վերցրած: Բնակչության այս խմբերը ոչքից «թեթեւ» են (այսինքն՝ շարժուն) մի շարք պատճառներով, որոնց թվում՝ փախստականների ու գիտատեխնիկական մտավորականության համար սեփականությունն ինչ-որ չափով պահելու ընդունակությունը եւ գործնականում հեռանկարների լրիվ բացակայությունը. «արտագնաց-խողանչիների» համար՝ ոչ միայն անցյալի համեմատությամբ հեռանկարների առավել զգալի, այլեւ Հայաստանում աշխատելու, հարմարվելու փորձի բացակայությունը: Ի դեպ, հարցվողների մեջ 21,6 տոկոսը նրանք են, ովքեր ցանկանում են գնալ 1-2 տարով եւ հոգեբանորեն հենց «արտագնաց-խողանչիներ» են՝ անկախ կոնկրետ մասնագիտությունից:

3. Չի կարելի ասել, որ ՀՀ իշխանությունները անհանգստացած չեն տարագրության աճի կապակցությամբ: Դրա աղբյուրներ քիչ չեն: Օրինակ, ՕՎԻՐ-ում բացեիբաց խոսում են մեկնումների փաստաթղթերի ձեւակերպման ամեն կերպ ձգձգման վերաբերյալ ամենավերին մակարդակով ցուցումների մասին՝ անգամ ամենակարճ ժամկետով հրավերի դեպքում: Շատ ճշմարտանման է: Մյուս կողմից լրացուցիչ, աղբյուր. ժամանակավոր հրավերով գնացածների մեծ տոկոսը հետո այլեւս չի վերադառնում: Որ այդպիսիք ամենեին էլ քիչ չեն պաշտոնական ընդմիշտ գնացածներից, ամեն որ կարող է հավաստիանալ առանց ՀՀ-ում ԱՄՆ-ի դեսպանատան կցորդ Դեվիդ Սիֆկինի վկայության վրա հենվելու: Դրա համար նրան ուղղակի հարկավոր է հաշվել հայտնի դեպքերը, ինչպես որ մենք ենք արել: Ի դեպ, Շրի Լանկայից, Հնդկաստանից, Պակիստանից եւ այլ վայրերից Գերմանիա գաղթի տարագիրներ փոխադրող «Լեւոն Թրավել» տուրիստական ֆիրմայի հետ վերջին պատմությունը հաստատում է ասվածը, թեեւ այդ պատմության մեջ ամեն ինչ չէ, որ ճշտվում է: Ինչպես եւ այն փաստը, որ այդ դեպքն ամենեին էլ միակը չէ: «Լեւոն Թրավելից» հետո արդեն այդ նույնի վրա բռնվեց Ուկրաինայի տուրիստական ֆիրմաներից մեկը:

Եւ վերջապես ամենածանրակշիռ աղբյուրը ՀՀ ղեկավարության կողմից ԱԷԿ-ի գործարկման հարցի վերաբերյալ որոշումն է, ՀՀ զանգվածային լրատվության միջոցների հզոր միջոցառումներն՝ ի պաշտպանություն այդ որոշման եւ այլն: Հիշենք նաեւ ՀՀ բարձր ղեկավարության բազմիցս արած հայտարարությունները. «Հայաստանը չի դիմանա եւս մի այսպիսի ձմեռ», «ԱԷԿ-ի գործարկման հարցում այլընտրանք չկա»: Ամեն ինչ ճիշտ է: Այստեղ «չի դիմանա» պետք է հասկանալ ոչ միայն եւ ոչ այնքան ուղիղ իմաստով, այլ՝ անուղղակի: Նման ձմեռները բնակչության հենց առողջ, ակտիվ մասի տարագրության վրա կտրուկ ազդող գործոններ են: Ի դեպ, գործող ԱԷԿ-ն էլ անխուսափելիորեն կդառնա տարագրության վրա ազդող հզոր ցնցում: Պատճառներն ակնհայտ են: Դրանցից մեկը նույնպես հստակ ձեւակերպել է ՀՀ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը ֆրանսիական «Պոլիտիկ էնտերնասիոնալ» ամսագրին տված հարցազրույցում անցյալ տարվա աշնանը. «Սեյսմիկ ճեղքվածքի վրա կառուցված մեր ԱԷԿ-ի շատ ցածր հուսալիությունը ոչ ոքի չի բավարարում»: «Կախարդական շրջանի» վառ օրինակ է, որի մասին մենք խոսեցինք մեր հոդվածի սկզբում, երբ «փրկությանն ուղղված միջոցառումները միայն խորացնում են դժվարությունները»:

4. Արեւմուտքի կողմից Երկրին օգնության համար ներկայացված ծրարն իր ծանրակշիռ մասով ղայմանավորված է Ռուսաստանի եւ հեռախորհրդային երկրների միջեւ էներգաբարների առեւտրում միջազգային գներին անցումով («Իզվեստիա», 9. 4. 1993, էջ 3): Այս պայմանը Երկրին արդեն ընդունել է («Իզվեստիա», 16. 4. 1993): Ընդ որում, Արեւմուտքը ռուսական նավթի գնորդներին տրամադրում է ծախքերը մասամբ հատուցող վարկեր: Արեւմուտքի առաջ քաշած օգնության նման պայմանը կունենա միանգամայն ակնհայտ հետեւանքներ՝ հանրապետությունների «հեռացում» Ռուսաստանից եւ «կապվածություն» վարկատուին: Կան նաեւ ոչ ակնհայտ հետեւանքներ: Բազմաթիվ փաստեր վկայում են (անգամ մենք մեր տեղեկատվության խղճուկ դաշտում հսկայական նյութ ենք հավաքել), որ ռուբլու հեղհեղուկ կուրսի, ազատ գների, էներգաբարների հետ այդ ամենը «խաղեր» են, իսկ ռուբլու կուրսի նման բացահայտ անկման դեպքում էներգաբարների համար միջազգային գները դառնում են աստղաբաշխական, հանգեցնում Ռուսաստանի արյունահոսությանը, այն վերածում հումք արտահանողի, հանդիսանում արժեզրկման պարույրի սեղմման հզոր աղբյուր: Արտահանման հումքային մասի կտրուկ աճը հստակ երեւում է հրապարակված վերջին տվյալներից (օրինակ, «Էկոնոմիկա ի Ժիզնում»):

Զուգահեռաբար այդ ամենը բուն Ռուսաստանում առաջացնում է պարակտիկական երեւույթներ: Այստեղ տեղը չէ այդ թեման հանգամանորեն զարգացնելու (հույս ունենք, որ դրան դեռեւս կանդրադառնանք): Այստեղ էլ ընդգծում ենք կարելի է անգամ չասել, թե կոնկրետ մեզ ինչի կհանգեցնի իրադարձությունների նման ընթացքը: Քանի որ պարզ բան է, որ Թուրքիան անգամ այժմ բացահայտ խառնվում է հայ-ադրբեջանական հակամարտությանը: Բացահայտորեն (դրանից ավելին էլ ի՞նչ լինի) հանգուցյալ նախագահ Թուրգուտ Օզալի շուրթերով խոստանում է մեզ ասամներ ցույց տալ, «պատմության դասերը մոռացած հայերին» հիշեցնում է «գալիք արդարացի պատժի» մասին, եւ «եթե նրանք (հայերը) այդպես շարունակեն... ասծուց ավելի դաժանորեն կպատժվեն: Նրանց վերջն ավելի ծանր կլինի» («ՌԱ», 2]. 4. 93. էջ 1): **Ի դեպ, այս դարձվածքներում կա արդեն կատարված ցեղասպանության վերաբերյալ խոստովանություն եւ ապագա վերջնականի վերաբերյալ սպառնալիք:** Թուրքիան արդեն հակամարտության գոտի է ուղարկում եւ զենք, եւ հրամկազմ: Հաշվի առնենք նաեւ նրա (Թուրքիայի) վարկերը Վրաստանին, վերջին տեխնիկական վարկը Ադրբեջանին, 15 միլիարդ ռուբլին այդ նույն Վրաստանին (ամեն դեպքում հետաքրքիր է՝ ինչո՞ւ): Կարելի է վստահ լինել, որ Հայաստանի համար կենսականորեն կարեւոր հաղորդակցության ուղիների պայքարները կշարունակվեն (առայժմ): Իսկ ի՞նչ կլինի, եթե Ռուսաստանում քաոս սկսվի: Արդեն ոչ ոք պատրանքներ չի տածում: Այս ամենը, ինչպես նաեւ անխուսափելի հետեւանքները (հանգուցյալ Թուրգուտ Օզալի վերը բերված խոսքերը) նույնպես տարագնացության տրամադրությունները կտրուկ խրախնող ցնցումային հզոր գործոններ են:

5. Հավանաբար այժմ ոչ ոք չի սկսի հավաստել, որ «ուր որ է», միայն մեր հայրենական, այլեւ համաշխարհային ողջ փորձն է վկայում սոցիալական խնդիրների կտրուկ, որակական բարդացումների մասին: Այդ նույն համաշխարհային փորձի համաձայն էլ նախանշանների միայն մի մասին արձագանքելով սոցիալ-տնտեսական խնդիրների լուծումները ստեղծում են անցանկալի հետեւանքների հանգեցնող իրադրություն: Հայրենական փորձը, այդ թվում եւ վերջին տարիների, լիովին հաստատում է ասվածը: Ստեղծվում է կախարդական շրջան, որտեղ փրկությանն ուղղված միջոցառումները միայն խորացնում են դժվարությունները: Ավելորդ չէ նշելը (թեեւ դա անմիջականորեն մեր հոդվածի թեմային չի վերաբերում), որ հենց այդ կախարդական շրջանի մեջ հայտնվեցին ռուսական բարեփոխումները: Նշանակում է՝ մերը նույնպես:

Այդ նույն ժամանակ համաշխարհային փորձից հայտնի են դեպքեր, երբ խորը ճգնաժամի վիճակում գտնվող երկրներում ազգային համաձայնության գալը հնարավորություն ընձեռեց դուրս գալ ճգնաժամից:

Սակայն հաշտաձայնության հասնելու համար հարկավոր է մշակել նոր մոտեցումներ, որն անհնարին է անել առանց ստեղծված իրավիճակի կանխատեսման օբյեկտիվ գնահատականի:

Հենց որպես այդ ուղղությամբ ձեռնարկված փորձ (հասցողված թե ոչ, թող դատի ընթերցողը) պետք է դիտել այս հոդվածը:

1. Նախ բերենք թվական մի շարք տվյալներ, որոնք բնութագրում են տարագրության երեւույթը: Դրանք հավաքել ու մեզ է տրամադրել պրոֆեսոր Վլադիմիր Գրիգորյանը:

Մեկ տարվա (1991-ի կեսից մինչեւ 1992-ի կեսը) ընթացքում ՀՀ արտգործնախարարության տվյալներով, արտաստիման («հեռավոր» արտաստիման) մշտական բնակության են մեկնել 16-18 հազար մարդ (2 հազար ԱՄՆ, 3-3,5 հազար Արեւմտյան Եվրոպայի երկրներ, 1,5-2,0 հազար այլ երկրներ, ներառյալ Արեւելյան Եվրոպան): ՕՎԻՐ-ի տվյալներով, որն անշուշտ համընկնում է ՊԱԿ-ի (այժմ ԱԱՊՎ) մեր տվյալներին, այդ կարգի մեկնողների թիվը 14,0-14,5 հազար է: Հարկավոր է նշել նրանց մեկնումն արգելակող առավել թույլ արժեքների հետեւանքով տարագիրների հոսքի կտրուկ աճը դեպի Գերմանիա:

Այնուհետեւ: ՀՀ-ում լրատվության եւ մշակութային կապերի գծով ԱՄՆ-ի դեսպանատան կցորդ Դեվիդ Սիֆկինի գնահատմամբ, ԱՄՆ գաղթի վերաբնակվածների թիվը արտոնությամբ մեկնածներից եթե ոչ ավելին, ապա պակաս չէ («Վրեմյա» թերթ, 1993թ., ապրիլ 2):

Հաշվի առնելով այս գնահատականը, ինչպես նաեւ համեմատաբար թեթեւ տարագրությունը Գերմանիա, կարելի է համարձակորեն հաստատել, որ Հայաստանից միայն «հեռավոր» արտաստիման տարագիրների քանակը հազիվ թե պակաս լինի 30-40 հազարից:

### Ռուսաստանի եւ հեռախորհրդային այլ հանրապետությունների վերաբերյալ տվյալները

Մեզ մոտ, Հայաստանում հրապարակված թվերի համաձայն, Ռուսաստան եւ հեռախորհրդային այլ հանրապետություններ մշտական բնակության մեկնածների թիվը մոտավորապես 1,5 անգամ շատ է «հեռավոր» արտաստիման մեկնածների թվից: Տարագրության այս նոր հսկայական հոսքի երեւան գալը (հետաքրքիր է, որ պրոֆեսոր Վլադի-

Հեղինակը շնորհակալություն է հայտնում «Առաջնթաց» մարդու իրավունքների եւ «Գրություն» հայկական ֆոնդին՝ աշխատանքը հովանավորելու համար:

digitised by A.R.A.R.@

հմտենք զարգացած երկրների շարքը, գրեթե «ընդհանուր շուկա» կամ էլ վաղարար դեղորում «վիշապների» շարքը, կամ էլ ավելի վաղարար դեղորում «ուղղակի-վագրերի» շարքը: Իսկ նման հավանականացումները դեռևս վերջերս այնքան տարածված, ավելի ճիշտ ամբոխվարական, մոդայիկ էին: Այժմ արդեն շատերի համար է դարձ, որ զարգացող երկրների մեջ ընկնելու համար հարկավոր է շատ խիստ դրկվել: Մասնավորապես նաև նրա համար, որ նրանց տարեկան միջին եկամտի ցուցանիշը 800 դոլլար է («ՄՆ» թիվ 14, 4, 4, 93, էջ 12): Իսկ մեր տնտեսությանն այս փուլում բնորոշ են ավերման, հետընթացի, այլ ոչ թե զարգացման երևույթները, որոնք չեն կարող չհանգեցնել աճող գործազրկության: Եվ սա նույնպես հանդիսանում է տարագրությունը խթանող ցնցումային հզոր գործոն:

6. Սակայն համընդհանուր միտումները, մեղմ ասած, մոռայլ են նաև զարգացող երկրների համար: Առկա միտումների դայմաններում զարգացած և զարգացող երկրների միջև տարածությունը կմեծանա աղետալի չափերով՝ վերջիններիս տնտեսության լիովին ավերման (կարծեմ մենք հենց այդ վիճակում ենք), հարյուր միլիոնավոր մարդկանց սովից կործանման և ընդհանուր առմամբ միջազգային հարաբերությունների սրման սպառնալիքով: Դա արդեն զգացվում է 900 մլն. հսկայական քանակությամբ բնակչություն ունեցող Աֆրիկայում, որի ընդհանուր ազգային արտադրանքը համեմատելի է 10 մլն. բնակչություն ունեցող Բելգիայի հետ: Վերը բերված կանխատեսումը «Հռոմեական ակումբի» նախաձեռնությամբ անցկացված սոցիալ-տնտեսական երևույթների մոդելավորման արդյունքն է: Ընդ որում, **սոցիալ-տնտեսական հսկայական երևույթների բարդագույն դդջ համալիրից առանձնացան մարդկության ճակատագրի համար որոշիչ մի քանիսը**, իսկ հետո, մաթեմատիկական մոդելի օգնությամբ հաշվիչ մեքենայի վրա խաղարկվեց դրանց փոխազդեցությունը: Իբրև այդպիսի հանգուցային երևույթներ ընտրվեցին **ազգաբնակչության, ինչպես նաև արդյունաբերական արտադրության և մթերքների արտադրության աճը, հանքային դաբարների նվազումները ու բնական միջավայրի աղտոտվածության ուժեղացումը**: Հաշվիչ մեքենայի մոդելավորումը ցույց տվեց, որ բնակչության տարեկան 2 տոկոսը (33 տարում կրկնապատկելու հաշվարկով) և արդյունաբերական արտադրանքի տարեկան 5-7 տոկոսը (10 տարում կրկնապատկվելու հաշվարկով) աճի տեմպերի դեղորում դաբարները սպառված կլինեն, արդյունաբերության աճը կդադարի, իսկ բնական միջավայրը կկեղտոտվի անդառնալիորեն:

**Այժմ ընդգծենք՝ այդ թվերը (ազգաբնակչության աճը տարեկան 2 տոկոսից ավելի, արտադրությանը՝ 5-7 տոկոս և ավելի (վերջին տասնամյակում) բնութագրում են հենց Թուրքիան, որը կարծես թե հանքային հարստություններով այնքան էլ հարուս չէ, ի տարբերություն, օրինակ, Իրանի կամ հենց նույն Միջին Ասիայի**: Այնպես որ, այդ հսկայական միտումները թուրքերի համար զավթումների խթան կարող են հանդիսանալ և արդեն իսկ հանդիսանում են (խոսքը բովանդակության, այլ ոչ թե ձևի մասին է), ինչպես մի ժամանակ արտավայրերի սակավությունը իրենց նախահայրենիք Միջին Ասիայում նրանց մղեց դարեր շարունակվող զավթումների, այդ թվում և դեղի արևմուտք և հյուսիս-արևմուտք: **Դա անխուսափելի երևույթ է**: Պարզ է, որ այդ միտումների խորացումը, եթե երևան չգան ոչ դակաս հզոր հակազդող գործոններ, խթանելու են հայերի տարագրությունը Հայաստանից: Հաշվի առնելով հայկական ազգային մտակերտվածքը, բնական ճկունությունը, լավ հարմարված ընդունակությունները, ՀՀ բնակչությանը համազոր սփյուռքի գոյությունը, կարելի է չկասկածել, որ հայերն իրենց զանգվածով կարող են շրջանցել տարագրությունը դժվարացնելու համար ստեղծված վարչական արգելքները:

Ռուսական մերկախոսության մեջ մեղադրված չլինենք, հիմնավորենք ասվածը: Մոսկվայի դեպարտամենտի համալսարանի ազգաբնակչության հարցերի ուսումնասիրության կենտրոնի տվյալներով, «1979-89 թվականների ընթացքում Մոսկվայում ավելի քան 2 անգամ աճել է ուրբեկների ու ադրբեջանցիների քանակը, 1,5 անգամ՝ հայերինը, վրացիներինը... Սակայն սկսված 1990 թվականից, ազգային բոլոր փոքրամասնությունների խմբերի արտահոսքը մեծանում է, և վերջապես 1992 թվականի առաջին կեսին միայն հայերն են բացառություն կազմել, որոնց ներհոսքը գերազանցում է արտահոսքին» («ՄՆ», թիվ 15, 11 ապրիլ 1993 թ., էջ 11): Եվ դա այն դայմաններում, երբ խստացվել են գրանցման դահանջները, ոչ դակաս չափով բազմապատկվել են նոր ժամանակների տնտեսական կտրուկ արգելքները (հիշեցնենք՝ այդ երևույթը ազգային բոլոր փոքրամասնությունների համար 1990-ից փոխել է իր բնույթը): Ու թեև Մոսկվայում հայերի ընդհանուր թիվն ամենևին էլ մեծ չէ, ընդամենը 44 հազար (ըստ այնմ նույն աղբյուրի), հարկ չի լինի կասկածելու, որ Հայաստանից տարագրված սոցիալական այդ խումբը, փոքրամասնություն լինելով հանդերձ, տնտեսական ու ֆինանսական առումով շատ ու շատ ծանրակշիռ է:

7. Վերը մենք ընդհանուր գծերով հղանցիկ շոշափեցինք Հայաստանից հայերի տարագրությունը «խթանող» բացասական գործոնները: Ի՞նչ կարող է դիմակայել այդ միտումին: Բացի դրանից, «Հնարավո՞ր է արդյոք արտաքին գործոնների այնպիսի դասավորություն, որը կհակազդի այդ բացասական երևույթներին»: Պատասխանը՝ «սկզբունքորեն այո»: Սակայն անվերապահ մի դայմանի դեղորում. «Ռուսաստանը դեպք է դիմանա իրեն բաժին ընկած փորձություններին»: Սա կարծես թե մեզ մոտ շատ շատերն են սկսել հասկանալ: «Այսօր» շատ շատերի համար նաև դարձ է դառնում մի բան, որը «երեկ» էլ կարելի էր նկատել. «Ռուսաստանը չի դատրաստվում «հեռանալ» ոչ Անդրկովկասից, ոչ էլ, առավել ևս, ռուսներով հարուս Միջին Ասիայից»: Ահա հենց սա էլ հույսեր է ներշնչում, հնարավորություններ է ստեղծում Անդրկովկասում, ներառյալ ՀՀ և ԼՂՀ, դահդանել ստատուս-քվոն:

## 8. Սակայն տարագրությունը չի կասեցվի

Գնահատենք դրա հեռանկարները, հետևանքները: Ըստ առաջին կետում բերված տվյալների, այդ նույն ԱՄՆ-ում նվազագույնը հաշվում են տարեկան 20 հազար տարագնաց: Այդ 20 հազարը բաժին է ընկնում ԱՄՆ-ում արդեն աղրող մեկ միլիոն հայերին: Այսդիսով, տարագնացությունը կազմում է արդեն արտասահմանում (ԱՄՆ) աղրող հայերի 2 տոկոսի չափով: Իսկ դա կհանգեցնի ԱՄՆ-ում աղրող հայերի թվի կրկնապատկմանը 33 տարի հետո: Նա, ով իրեն նեղություն կդատճառի ուշադրությունը սեւեռել բերված թվերի վրա, կհամոզվի, որ դրանք նույնիսկ դակասեցված են: Ամերիկյան սփյուռքը կկրկնապատկվի նույնիսկ ավելի շուտ: Ի դեղ, այդ է վկայում նաև ամերիկյան սփյուռքի աճի դինամիկան անցյալ տարիների ընթացքում: Նույնիսկ եթե ընդունենք, որ Ռուսաստան տարագնացության բափը բնութագրվում է նույն մեծություններով (իսկ իրականում այն հավանաբար բարձր է), ապա 2-3 տասնամյակի ընթացքում ռուսական սփյուռքն էլ կկրկնապատկվի: Այս սփյուռքներն իրենց քանակով արդեն համեմատվում են կամ էլ մոտ են ՀՀ բնակչությանը: Եվ դա լավագույն դեղորում, եթե ազգային աղետի բնույթի դայծառներով տարագնացությունը չվերածվի փախստականության: Շատ ենք ուզում հավատալ, որ իրադարձությունների զարգացման այդ ամենառողջարար կան տարբերակն իրականություն չի դառնա: Ահա թե հիմնականում ինչդիսին է տարագնացության վիճակը:

9. Նման իրադրության մեջ ազգի առջև ծառացած գլխավոր, առաջնային խնդիրներից մեկը նդատակաուղղված կերդով այնդիսի դայմանների ստեղծումն է, որոնց դեղորում տարագիր հայերը կկարողանան դահդանել հայությունը: Այս գործում մենք հարուս փորձ ունենք: Սակայն ոչ հրեաների չափ, եթե դատենք արդյունքներով: Ակներեւ է, որ դետք է կիրառվեն ազգի գոյատևման, ազգային ինքնագիտակցության դահդանման նույն, արդեն փորձված, ստուգված մոդելները: Ավելին, նրա «հավատման» մոդելները: Տեսնենք, թե հրեաները որքան խելոք են մոտենում մասնավորապես ազգության որոշման հարցում: Յուրաքանչյուրը, ում նախնիների ինչ-որ սերունդների մեջ եղել է հրեա կամ հրեուհի, ինքնաբերաբար ստանում է Իսրայելի քաղաքացիության իրավունք, դրանից բխող բոլոր հետևանքներով: Նույնպես նաև նրանք, որ հուդայականություն են դավանում: (Այս տվյալներով, որոնք բերում ենք հիշողությամբ, կարող են աննշան անճշտություններ ունենալ ձեւակերդման մեջ, սակայն ոչ բուն էության): Արդեն զարմանալի չէ, որ մեզ մոտ, Հայաստանում, «հանկարծ» հայտնաբերվեցին հրեաների այդդիսի 400 ընտանիք: Կամ երբ «ինչ-որ Սահակովիչ Աբրահամյան» իրեն լրջորեն հայտարարեց հրեա (զվարճալի դեղք, որ դատմեց դրոֆեսոր Վլադիմիր Գրիգորյանը):

Իսկ մեզ մոտ տեսք, թե ինչ է կատարվում. փախստականները հայեր չեն, քանի որ չեն տիրապետում մայրենի լեզվին (իսկ որտե՞ղ եւ ե՞րբ սովորեին), համշենցիները (Աբխազիայի հայերը) նույնպես հայեր չեն, որովհետեւ «մարդ» ասելու փոխարեն ասում են «մաշ», Վարդենիսում «տեղացիները» փախստականներին անվանում են «գյալմի» (ի դեղ, թուրքերեն նկվոր): Նույնը եւ ռուսները... Փաստորեն այնքան հեշտ է դատրաստես ռուսաստանցիների, ռուսալեզուների եւ ռուսների եւ այլնի բաժանելը:

## 10. Մեզ ամենից առաջ ի՞նչ է հարկավոր

**Առաջին**: Ամենից առաջ անհրաժեշտ է ինչ-որ ընդհանուր դլատֆորմ, դայմանավորվածություն, համաձայնություն, ծայրահեղ դեղորում գոնե հիմնահարցերում, որոնք մենք կարող ենք անվիճելի համարել: Դարձյալ հիշեցնենք: Համաբխարհային փորձի մեջ հայտնի են դեղքեր, երբ խորը ճգնաժամի մեջ գտնվող երկրներում ազգային համաձայնության գալը հնարավորություն է ընձեռնել ճգնաժամից դուրս գալու:

**Երկրորդ**: Հարկավոր է արտասահմանում գտնվող մեր հայրենակիցների վերաբերյալ մշակել քաղաքականության հստակ ընթրոնում: Նման քաղաքականությունը կարող է հենվել միայն իրավական հստակ հիմքերի վրա: Այդ հիմքը դետք է անհապաղ ստեղծել: Չլի կարելի սպասել, մինչեւ սահմանափակվող միջոցառումներն սկսվեն միակողմանիորեն: Օրինակ, Ռուսաստանը դնդում է գաղթի վերաբերյալ միջազգային համաձայնագիր ստորագրել: Պնդում է քվոտաներ մտցնել, ընդգծելով ոչ այնքան դրանց արգելող բնույթը, որքան քվոտաների շրջանակներում դրանց ընդունող կողմի դատասխանատվությունը: Հարկավոր է անմիջապես սկսել աշխատանքն այս ուղղությամբ: Այլապես բախումներն անխուսափելի են: Միգուցե չարժե հիշեցնել իրադրությունը Հյուսիսային Կովկասում եւ այդ հողի վրա ծագած բախումները: Առավել ևս, որ կան արտաքին ուժեր, որոնք կաշխատեն բոլոր միջոցներով երեւույթին հենց այդ ընթացքը տալ: Ուժեր, որոնք կարքեն բախումներ: Հիշեցնենք Հյուսիսային Կովկասում Բաքվի հատուկ ծառայությունների կողմից տարածված գրքույկը, որտեղ հայերի անունից տարածային դահանջներ են ներկայացվում Ռուսաստանին:

**Երրորդ**: Անհրաժեշտ է աշխատուժի գաղթի կարգավիճակի վերաբերյալ իրավական կարգավորում: Անհրաժեշտ է կազմակերդված եղք: Ի դեղ, գործող, այլ ոչ թե «թղթային»: Այս ուղղությամբ հաջողությունները կարող են բուլացնել արտագաղթը: Դարձյալ հիշեցնենք սոցիոլոգիական հարցման տվյալները. 1-2 տարով կուզենային դուրս գալ հարցվողների 21,6 տոկոսը, իսկ մինչեւ «լավ ժամանակները»՝ 17,9 տոկոսը: ՀՀ բնակչության նման հսկայական շերտի (39,8 տոկոս) հարցման չարձագանքելն ուղղակի հանցագործություն է: Առավել ևս, այստեղ կարելի է ավելացնել նաև հարցվողների այն 2,7 տոկոսը, որոնք կուզենային ՀՀ-ց մեկնել միայն «ծմռան 3-4 ամիսը»:

**Չորրորդ**: Անհրաժեշտ է ստեղծել հայկական համայնքների մշտապես գործող կոնգրես եւ դրա վերլուծական կենտրոն, որը եւ կզբաղվի այս ընթրոնումների մշակմամբ, կեղեքելի իրադրությանը, կանցկացնի մոնիտորինգ եւ այլն:

**Հինգերորդ**: Անհրաժեշտ է ստեղծել միջազգային իրավական ծառայություն (մշտապես գործող կոնգրեսին կից), որի նդատակը կլինի հայկական համայնքներին իրավաբանական օգնությունը:

**Վեցերորդ**: Հարկավոր է ստեղծել ձեռներեց հայերի լիգա:

**Յոթերորդ**: Հարկավոր է կարգավորել դաշտոնական եւ ոչ դաշտոնական կապերը ռուսական համայնքների արդեն իսկ մշտապես գործող կոնգրեսի վերլուծական կենտրոնի հետ (անվանումը՝ «Ռուսկիյ դոմ»): Կոնգրեսն անց է կացվել Մոսկվայում այս տարվա մարտի 29-30-ին («ՄՆ», թիվ 15, 11. 4 1993, էջ 12):

**Ութերորդ**: Անհրաժեշտ է բոլոր «ազգային կոնգրեսների» համախմբում (դրանք կարող են տարբեր անվանումներ ունենալ, ի նկատի ունենք ոգով համընկնող կազմակերդությունները), նման համախմբումն ըստ երեւույթին լավ կլինի անցկացնել միջխորհրդարանային ասամբլեայի հովանու ներքո:

**Իններորդ**: Անհրաժեշտ է ամենաուշադրություն դարձնել ուսումնասիրության ընթացքի վրա՝ նոր, առավել առաջավոր մեթոդների ներդրման միջոցով: Արագ փոփոխվող դայմաններին հարմարվելու, դրանով իսկ մեր գոյատևման հարցին ուղղակիորեն կապված այդ խնդիրն այնքան լուրջ է, որ «Հռոմեական ակումբի» համար դարձավ առանձին զեկուցման թեմա:

**Տասներորդ**: Այս ենթատեքստի մեջ, ինչպես նաև լեզվի մասին օրենքին վերաբերող բանավեճերի կապակցությամբ (դանց ձեռնտու է այդ առիթով ջուր դղտորելը) ուշադրություն դարձնենք երեւանում Essential English-ի տեսակի այլանդակ գրերով զանազան գրերի առատությանը: Ի դեղ, այս հանգամանքը (գրերը) եւ նման գրերի դեղորում դահանջարկի առկայությունը եւս ՀՀ բնակչության զգալի մասի տարագրական տրամադրությունների եւս մի՝ ամենևին էլ ոչ կողմնակի աղացույց են: Մեզ հարկավոր է հայերենի, ռուսերենի նույնպիսի Essential-ի զանգված: Դրանք՝ առաջնահերթ: Մեզ հարկավոր են դրանց տարբեր ու ժամանակակից, համաբխարհային փորձն ընդգրկող ուսումնասիրման մեթոդականներ: Որ դա լիովին հնարավոր է, վկայում է նույն բեյրության դդրոցների շրջանավարտների փորձը, որտեղ հայերը սովորում էին միաժամանակ չորս լեզու (հայերեն, արաբերեն, անգլերեն, ֆրանսերեն) եւ, գլխավորը՝ գիտեն անհրաժեշտ մակարդակով: Մենք ունենք հիանալի լեզվաբաններ (վերջերս, օրինակ, հրատարակում եղավ շատ բարձր մակարդակով եւ հայերենին, եւ ռուսերենին, եւ անգլերենին, եւ ֆրանսերենին տիրապետող դրոֆեսոր Հարությունյանի մասին): «Խաղաթուղթը» հենց նրանց ձեռքերում է: Հասկանալի է, որ գործը լեզուներով չդեսք է եւ չի կարող սահմանափակվել:

## Տասնմեկերորդ: Նուրբ հարց՝ ֆինանսներ

Հսկայական ուշադրություն նվիրելով «արեւմտյան» սփյուռքին, մենք համանման ուշադրությունից դուրս բողեցինք Ռուսաստանին ու հետխորհրդային երկրները: Իսկ այդ նույն ռուսական հայկական սփյուռքն արդեն ունի ֆինանսական հսկայական հնարավորություններ: Ֆինանսավորման համար հիմնադրամ է դետք: Եվ դրա համար, մասնավորապես, հայ ձեռներեցների (եւ արեւմտյան, եւ արեւելյան, եւ տեղական) լիգա:

## Տասներկուերորդ: Ամփոփում

Հայերի, որդես ազգի, գոյատևումը նշանակում է նաև Հայաստանի գոյատևում, որդես ոչ սոսկ դետական հասկացություն, որը հնարավոր է նաև երկրորդ անհրաժեշտ դայմանը կատարելու դեղորում (առաջինը՝ «Ուժեղ Ռուսաստան», մենք ձեւակերդեցինք վերը): Հասկանալի, «Եթե հաջողվի ստեղծել այնպիսի դայմաններ, որոնց դեղորում Հայաստանից դուրս հայտնված յուրաքանչյուր հայ կարողանա հենվել համայնքի, հայրենակցական կազմակերդությունների վրա»: Չնայած մեր հարստագույն փորձին, մենք այստեղ նույնպես, դատելով արդյունքներից, ավելի լավ օրինակ, քան հրեաներինը, չգիտենք: Կասկածից դուրս է, որ օգտակար ցանկացած փորձ դետք է փոխառնվի:

Վերջում մի շատ հետաքրքիր եզրակացություն. հասկանալի է՝ ոչ մեր անձնականը: ԱՄՆ-ում ազգային համայնքները (իտալական, լեհական, հրեական, հայկական եւ այլն) ոչ միայն չեն միախառնվում, այլեւ դիտարկվում է նրանց հետագա առանձնացման միտում: Այսինքն՝ ամերիկյան ազգի «ձուլման կաթսայի» փոխարեն ստացվում է, այսդես ասած, «սալաթաման»: Պետք է ընդգծել, որ այս երեւույթները հիմքում ցրվելու, տարածման, ինքնակազմակերդման, նոր ձեւերի ստեղծման երեւույթներն են, այդ թվում նաև ծագումնաբանության մեջ (այսինքն՝ ազգության կազմավորման), որն զգացվում է, օրինակ եւ արաբների, եւ ռուսների, ուկրաինացիների, բելառուսների (ավելի լայն՝ արեւելյան սլավոնների) առավել ևս (արյունակցորեն) հարավային սլավոնների մոտ (Հարավսլավիա): Նույնը չի կարող տեղի չունենալ նաև թուրքական ժողովուրդների հետ, որը մեզ լրացուցիչ հույս է ներշնչում: Մեր կարծիքով, նման երեւույթների հետեւանքով «Մեծ Թուրանը» չի կայանա:

Մեկ անգամ էլ կրկնենք՝ մեզ հարկավոր է հայրենակցական կազմակերդությունների ամրապնդման մտածված, համակողմանի քաղաքականություն: Դրանք դետք է լինեն ոչ միայն մշակութային կենտրոններ, այլեւ աշխատանքի տեղավորման հարցերում գործնական եւ այլն... Որդեսզի կարողանան արդյունավետ դիմակայել ձուլման, տարալուծման արդեն իսկ ընթացող երեւույթներին:

ՅՈՒՐԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

digitised by A.R.A.R.@

Մեկնաբան

# ԱՐՄԱՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ

Նախագահ Հոսնի Մուբարաքը մի քանի օր առաջ մեկնեց Աման, որից հետո կայցելի Ծոցի արաբական երկրների մայրաքաղաքները: Եգիպտական աղբյուրների համաձայն, նա խիստ մտահոգված է ռազմաքաղաքական այն խավարնակով, որ ձևավորվել է երջանում Ծոցի պատերազմից հետո: Պաշտոնական Կահիրեն անհանգստացած է, որ Իրաքի ջախջախումից հետո երջանում առաջացած ուժային վակուումը հետևողականորեն լրացվում է Իրանի կողմից: Դժվար է ասել, թե ինչքանով են կիսում Կահիրեի տեսակետը Դոհան, Մանաման, Էլ-Քուվեյթը ու Էռ-Ռիյադը, եթե հավի առնենք, որ վերջին երկուսը ռազմական դաշինքի մեջ են Արևմուտքի հետ, գերտերությունների՝ ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի հետ, իսկ հետանկարում Քուվեյթը նախատեսում է երաշխիքներ ձեռք բերել նաև Ռուսաստանից, մինչդեռ առաջին Հերկուսն ավելի շատ խնդիրներ ունեն հարևան Սաուդյան Արաբիայի, քան Իրանի հետ: Թերևս միայն Աբու-Դաբիում է, որ նախագահ Մուբարաքի մտահոգությունը լիարժեք արձագանք կգտնի, քանզի այս երկիրը Իրանի հետ դիմակայության անմիջական պատճառներ ունի: Բացառված չէ, որ հենց Արաբական Միացյալ Էմիրությունների եւ Իրանի միջեւ վիճարկվող կղզիների հարցը կօգտագործվի Մուբարաքի կողմից արաբական միասնականության դրոշը պարզելու համար: Բայց հազիվ թե որեւէ մեկը լրջորեն ընդունի Եգիպտոսի մտահոգությունը հարեւանների ճակատագրով, քաջ գիտակցելով, որ «իրանական սպառնալիքի» խնդիրը Կահիրեի համար ոչ այնքան արտաքին, որքան ներքաղաքական խնդիր է: Ճիշտ է, նախագահ Մուբարաքի ուղեւորության նախօրյակին նա մի հանկարծահաս նվեր ստացավ Թեհրանից, որը կարող է ստիպել Էռ-Ռիյադին ավելի ուշադիր ունկնդրել հյուրին: Արեւմուտքի լրատվության միջոցներ հաղորդեցին, թե Մեքքա ուխտագնացության մնկնող իրանցիները պատրաստվում են հակաամերիկյան ցույցեր կազմակերպել սրբավայրում: Այդպիսի դեպք արդեն եղել է, որն ավարտվեց սաուդյան ոստիկանության հետ արյունալի ընդհարումներով (400 զոհ), ինչը ժամանակին սաուդյան իշխանություններին դրդեց արգելելու իրանցիների ուխտագնացությունը Մեքքա:

Այնուամենայնիվ, Իրանի հետ Եգիպտոսի հարաբերությունների լարվածությունը նախ եւ առաջ ներքաղաքական խնդիր է եւ կապված է արաբական աշխարհի ամենաղեմոկրատական երկրում իսլամական արմատականության աճի հետ: Եգիպտոսը հակված է ողջ պատասխանատվությունը բարդելու Իրանի եւ նրա համակիրներ Սուդանի ու Ալժիրի վրա: Մինչդեռ պաշտոնական Թեհրանը բազմիցս հերքել է իր մասնակցությունը Եգիպտոսում իսլամական շարժման ուժեղացման գործում, օրերս եւս մեկ անգամ Իրանի հոգեւոր առաջնորդ Այաթոլլա Խամենեին ընդգծեց դա: Թեհրանի դեմ առաջադրվող մեղադրանքների հարցում Եգիպտոսն անդրդվելի մնաց նույնիսկ այն բանից հետո, երբ միջազգային անկախ փորձագետների խումբը իրավիճակի մանրամասն ուսումնասիրությունից հետո եկավ այն եզրակացության, որ Իրանի մասնակցությունը Եգիպտոսում իսլամական արմատականության աճին նվազագույն է, եւ նշված երեւույթը այդ երկրում ավելի շատ ներքաղաքական պատճառներ ունի:

Վերջերս «Ամերիկայի ձայն» ռադիոկայանի թղթակիցը հանդիպում էր ունեցել արմատականների հետ Եգիպտոսի Ասուան քաղաքում, որը հետաքրքրվեց երբում: Եգիպտացիները մեղադրում են իրենց իշխանություններին կաշառակերության, մարդու տարրական իրավունքների ոտնահարման, ժողովրդին աղքատության ու թշվառության մատնելու մեջ: Նրանք վրդովված են այն վայրագություններից, որ գործադրում է ոստիկանությունն ընդդիմության դեմ: Զրուցակիցներից մեկը պատմեց այն մեթոդների մասին, որ կիրառում է ոստիկանությունը խուզարկությունների, ձերբակալությունների եւ հարցաքննությունների ժամանակ: Իսկ ժողովրդի ընչազուրկ հասվածը մեծ սեր է տածում իսլամների նկատմամբ, ասաց նա, որովհետեւ իսլամներն օգնում են աղքատներին եւ կարիքավորներին: «Սոցիալական արդարության, համասարության եւ եղբայրության գաղափարները օրեցօր ավելի մեծ նշանակություն են ստանում այս երկրում, որ բնակչության մի սվար հասված աղքում է ծայրագույն աղքատության մեջ: Նրանցից գլխին է հեսարերում, թե ի վիճակի են արդյոք իսլամ արմատականները աղահովելու այդ ամենը հնարավոր հարթակից հետո», եզրափակում է ռադիոկայանի թղթակիցը:

Մյուս կողմից, անշուշտ, ճշմարտացի են Եգիպտոսի իշխանությունների այն մեղադրանքները, որ արմատականները դրսից նպաստում են երկրում տնտեսական ճգնաժամի հասունացմանը, ահաբեկելով զբոսաշրջիկներին, օտարերկրյա գործարարներին, ինչն արդեն զրկել է Եգիպտոսին միլիոնավոր դոլլարների եկամուտից: Առավել եւս ոչ մի արդարացման ենթակա չեն արմատականների գործողությունները երկրի դրսի հիսոնյա բնակչության դեմ: Իշխանություններն, իհարկե, պայքարում են արմատականության դեմ, այդ թվում նաեւ վերը նշված ուժային մեթոդներով, ինչը սակայն որեւէ արդյունքի դժվար թե հանգեցնի: Արեւմտյան դիտորդները նշում են, որ վերջին ժամանակներս պատասխանական Կահիրեն որոշակի զիջումների է գնում, առանձնապես քարոզչության ոլորտում: Եգիպտական հեռուստատեսությամբ հաճախակի են դարձել կրոնական հաղորդումները, խստացվել է գրաքննությունը «բարոյական հարցերում»: Բայց սա արդեն դժգոհություն է առաջացնում բնակչության այն շրջանում, որը կողմ է աշխարհիկ հասարակության պահպանմանը: Եգիպտացի մտավորականներից մեկը նշում է, որ նման զիջումներով արմատականության դեմը չես առնի, այլ ավելի կընդլայնվի նրա ազդեցության տարածման հասարակական հիմքը: Ստացվում է մի փակուղային վիճակ, որը հղի է ամենաանկանխատեսելի հետեւանքներով:

Արաբական աշխարհի առջեւ ծառացած այս հիմնահարցին չի կարելի սոսկ տեղայնացված պատճառահետեւանքային բացատրություն տալ: Չէ որ խոսքը ոչ միայն Եգիպտոսի մասին է: Արմատականության ալիքը ցնցում է ոչ միայն Եգիպտոսը, այլեւ Ալժիրը, Թունիսը, Լիբիան, Պաղեստինը: Դարասկզբի արաբական վերածնունդը մշակեց երկու հավասարազոր գաղափար, խոսություն՝ համարաբականությունը, կամ այլ կերպ ասած, արաբական ազգայնականությունը եւ համիսլամականությունը, որոնց միջեւ խուսանավում է հասարակական միտքը արաբական աշխարհում: Վերջին տասնամյակում ազգայինազատագրական պայքարի եւ ազգային ինքնիշխանության ձեռք բերման մթնոլորտում գերակայող գաղափարախոսությունը ազգայնականությունն էր եւ համարաբականության գաղափարը: Սրան էր նպաստում նաեւ պաղեստինյան խնդիրը, եւ այդ հիմքի վրա էին իրենց

ֆաղաքական կարիերան սարքում Նասերն ու Քադաֆին, Ասադն ու Հուսեյնը:

Համարաբականությունը մի գաղափար էր, որի իրականացման դեմ գործնականում պայքարում էին բոլորը, բայց ակնհայտորեն դրա դեմ կարող էր հանդես գալ միայն Անվար Սադաթի նման ինքնասպանը: Պետք է հավի առնել նաեւ, որ արաբական ազգայնականությունը համեմված էր սոցիալիստական երանգներով եւ ուսի առաջին հզոր հարվածը ստացավ սոցիալիստական ճամբարի անկումի հետեւանքով: Հաջորդ հարվածն Իրաքի ջախջախումն էր, իսկ արաբ-իսրայելական բանակցություններում արաբ առաջնորդների անսկզբունքայնությունը ճգնաժամը հասցրեց իր գագաթնակետին: Իրրեւ հետեւանք արմատականների «Համասը» դուրս է մղում Պաղեստինի ազատագրության կազմակերպությանը, բռնազավթված տարածքների բնակչության շրջանում ձեռք բերելով ազգային շահերի իրական պաշտպանի վարկը: Այժմ արմատականները փաստորեն օրինական ճանապարհով անցնում էին իշխանության, իսկ Լիբիայում արմատականությունը խարխլում է Նասերի փառքի սվերը տարիներ շարունակ իր վրա գցելու ձգտող Մուամմար Քադաֆիի իշխանությունը: Այնքան էլ հավաս չեն ներշնչում արեւմտյան որոշ դիտորդների այն դնդումները, թե Քադաֆիի վարչակարգի կողմից ձեռնարկված հետադիմությունները իսլամ արմատականների դեմ զուտ ձեւական բնույթ են կրում եւ ուղղված են Արեւմուտքին սիրաշահելուն: Քադաֆիի իշխանությունը հիմնված էր համարաբականության, սոցիալիստական ազգայնականության եւ արաբական պահանջատիրության պաշտպանության վրա եւ այժմ, երբ բոլոր իդեալները փշրվում են, պետք է փշրվի նաեւ այդ իդեալների վրա կոտրված դարձած Քադաֆիի իշխանությունը:

Արեւմուտքը պետք է հաղթահարի իր ավանդական բարդույթները արաբական աշխարհի նկատմամբ: Ոչ թե այն նոդասակով, որպեսզի կանխի իրադարձությունների բնական զարգացումը եւ ամեն գնով դիմակայի իսլամականների հաղթանակին այդ երկրներում, այլ որպեսզի անկանխատեսելի փոփոխությունից, Արեւմուտք-Արեւելք փոխհարաբերություններ ծնան քաղաքակրթության շրջանակներում եւ չհանգեցնեն աղյունալի դիմակայության, դրանից բխող բոլոր հետեւանքներով:

ՏԻԳՐԱՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ


## Հայ-իտալական «ԻՄԱԿ» ֆիրման

### առաջարկում է

Բեռների տեղափոխություններ ԻԼ-76 ինքնաթիռով Երեւան-Սավրոպոլ: Ըստ պատվերի, ձեր բեռները կտեղափոխենք ԱՊՀ ցանկացած վայր: Ուեվարձի գինը 1 կգ բեռի համար մինչեւ 80 ռ. է: Վճարման ձեւը՝ ցանկացած:

### Առաջարկում է.

Պահեստավորման ծառայություններ Սավրոպոլում եւ բեռների տեղափոխում Սավրոպոլից ԱՊՀ ցանկացած վայր ավտոտրանսպորտով:
Ուղեւորների համար հեռեւյալ ուղերթները ինքնաթիռներով.

**Երեւան-Վոլգոգրադ-Երեւան**
**Երեւան-Սավրոպոլ-Երեւան**
**Երեւան-Աստրախան-Երեւան**

### Կազմակերպում է.

Նախնական պատվերներով ուղեւորների եւ բեռների տեղափոխում ինքնաթիռներով ԱՊՀ ցանկացած երկիր եւ երկարատեւ համագործակցության հիման վրա՝ արտասահման:

### Իրացնում է.

Սենդամբերք, ինչպես նաեւ ընդունում է նախնական պատվերներ սենդամբերքի ձեռք բերման եւ Հայաստան տեղափոխման համար մեկ շաբաթվա ընթացքում:

Հասցեն. Երեւան 375009, Իսահակյան 28, 3-րդ հարկ. հեռ. 52.97.40, 59.99.83


Լուրերի Հոսք

## Տնտեսական խարդախությունների դեմ պայքարող կազմակերպություն

Բեռլինում ստեղծված «Տրանսպարենսի ինտերնեշնլ» միջազգային նոր կազմակերպության հիմնական նպատակը պայքարն է տնտեսական կաշառակերության դեմ: Կազմակերպության նախագահ Պետեր Այգենի խոսքերով, այն մտադիր է հիմնական ուշադրությունը նվիրել «երրորդ աշխարհի» երկրներին, որոնք հաստատես տուժում են խարդախ գործարքներից: Նոր կազմակերպության հիմնադիրները, որի մեջ մտել են Եվրոպայի, Աֆրիկայի, Հյուսիսային եւ Հարավային Ամերիկայի 20 պետությունների ներկայացուցիչներ, մտադիր են մասնակցել տնտեսական հարաբերությունների որոշում միջազգայնորեն ընդունված դրույթների մշակմանը, որոնք կնպաստեին կաշառակերության դեմ եռանդուն պայքարին: ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՌ-ՏԱՍՍ

## Թուրքիան կօգնի Թաթարստանին

Ստամբուլում ստորագրվեց թուրքական «Դեգերե էնթերփրայզիս» ընկերության, «Թուրքուրոս» համատեղ ձեռնարկության, «Թաթնավթ» միավորման եւ «Վոստոկմոնտաժազ» տրեստի միջեւ մտադրությունների մասին արձանագրությունը: Փաստաթղթով նախատեսվում են համատեղ գործողություններ նավթահեծախուզության, հորատման, նավթաբերների օգտակար գործակիցների բարձրացման, նոր տեխնոլոգիաների կիրառման, մասնագետների փոխանակման եւ առեւտրի ոլորտներում: Երկկողմանի համագործակցությունը նախատեսում է նաեւ Ստամբուլում «Թաթնավթի» եւ Ալմետյեւսկում «Թաթուրոս» համատեղ ձեռնարկության մշտական ներկայացուցչությունների կազմակերպում: ՆՏ

## 4.7 միլիարդ ռուբլի խաղաղարար ուժերի ֆինանսավորման համար

Ինչպես հայտնի է, խաղաղարար ուժերի կազմում Հարավային Օսիայում գտնվող Ռուսաստանի մոտոհրաձգային գունդը նախատեսվում է դուրս բերել մայիսին: Շրջանի օս եւ վրաց բնակչությունը գտնում է, որ խաղաղարար ուժերը դուրս բերելուց հետո կաճի լարվածությունը, տեղի կունենան սադրիչ գործողություններ եւ նույնիսկ կվերսկսվեն զազմական գործողությունները: Շրջանում խաղաղարար ուժերի, հատկապես ռուսաստանյան զորքերի ներկայության անհրաժեշտությունը նշվում էր ԵԱՀԽ նախագահ Մարգարետ Ուգլամի հայտարարության մեջ: Ինչպես հայտնի դարձավ, Ռուսաստանի արտակարգ իրավիճակների պետական կոմիտեն 4.7 միլիարդ ռուբլի է հատկացրել խաղաղարար ուժերի հետագա ֆինանսավորման համար: Լենինգրադի զինվորական օկրուգում կազմավորվում է ռուսաստանյան զորքերի մի գումարտակ, որը պետք է փոխարինի դուրս բերվող ստորաբաժանումներին: ՆՏ

## Շեւարդնաձեի այցը հետաձգվել է

Ինչպես հաղորդեցին Վրաստանի արտգործնախարարության մամուլի կենտրոնում, հետաձգվել է էդուարդ Շեւարդնաձեի այցը Իսրայել, որը պետք է տեղի ունենար մայիսի 15-ին: Այն հետաձգվել է Իսրայելի կառավարության խնդրանքով, քանի որ այդ ժամանակահատվածում Իսրայելի վարչապետ Յիցխակ Ռաբինը եւ արտգործնախարար Շիմոն Պերեսը կգտնվեն երկրից դուրս: Իսրայելական կողմը առաջարկել է հետաձգել Վրաստանի ղեկավարի այցը մինչեւ հունիս: Սակայն է. Շեւարդնաձեն հունիսին ի վիճակի չի լինի այցելել Իսրայել եւ, հավանաբար, որոշում կընդունվի մինչեւ հուլիս այն հետաձգելու վերաբերյալ: ՆՏ

digitised by A.R.A.R.@

Աշխարհի Հայր

## Հրեական մարզին պետք է հանրապետության կարգավիճակ

Մայիսի 10-ին ավարտվել է Հրեական Ինքնավար Մարզի պատասխանատու եւ նախաձեռնող անձանց դպրավիրակության Թել Ավիվ կատարած այցը: Այցի ընթացքում քննարկվել են Բիրոբիջանի մատույցներում փակված ազգական օդանավակայանի բազայի վրա միջազգային օդանավակայանի շինարարության նախագծերը, ինչպես նաեւ գյուղատնտեսական օբյեկտների շինարարության մեջ խոշոր, երկարաժամկետ կապիտալ ներդրումների, Իսրայելի եւ Ամերիկայի հրեական համայնքների մասնակցությամբ միջազգային հեռուստաընկերության կազմակերպման հարցերը: Պետվիրակության անդամների հաղորդման համաձայն, այցի գլխավոր արդյունքն այն էր, որ պարզ դարձավ, թե նախկին Հրեական Ինքնավար Մարզի Ռուսաստանից անջատվելը եւ հանրապետության կարգավիճակ ստանալը Իսրայելը «ոչ մի շեղել» չի հատկացնի մարզին: ՆՏ

## Ռուսաստանի մեկուսացումը կործանիչ է

Մոսկվայում կայացած «կլոր սեղանի» նիստում ԱՊՀ միացյալ զինված ուժերի գլխավոր հրամանատար Եվգենի Շապոշնիկովը հայտարարեց, որ «ներկա իրավիճակում Ռուսաստանի երջանային հաղթականության դեգինտեգրացիոն տեսանկյունը կիանգեցնի հսկայական կորուստների»: Մարտալի տվյալներով, նույնիսկ ԱՊՀ երջանակներում Ռուսաստանի մեկուսացումը կարժենա 16 տրիլիոն ռուբլի: Ե. Շապոշնիկովը նշեց, թե անհրաժեշտ է հավի առնել այն հանգամանքը, որ աշխարհում կազմավորվել կամ կազմավորման փուլում են գտնվում մի քանի ուժային կենտրոններ. ԱՄՆ, Արեւմտյան Եվրոպա, Արեւելք (Ճապոնիա եւ Չինաստան): Այս իրավիճակում «ոչ մեկին ձեռք չի տալիս, որպեսզի երկրագնդի 1/6 մասում լինի հզոր ռազմական պետություն»: «Կլոր սեղանի» մասնակիցները փորձագետների աշխատանքային խմբին հանձնարարել են 7 օրվա ընթացքում նախապատրաստել Ռուսաստանի ներսում հարաբերությունների ֆեդերացման հանձնարարականները: Խորհրդակցության հիմքում սկզբունքների մշակման վերաբերյալ «կլոր սեղանի» հաջորդ նիստը տեղի կունենա մայիսի 26-ին: ՆՏ

## Կետորսությունը նվիրված միջազգային ժողով

Ճապոնական Կիոսո քաղաքում երեկ բացվեց միջազգային խորհրդաժողով նվիրված կետորսության հարցերին: Ճապոնիան եւ Նորվեգիան պահանջում են վերանայել 6 տարի առաջ կետ ձկան որսն արգելող միջազգային համաձայնագիրը, մինչդեռ Ֆրանսիան եւ Բրիտանիան, ենթարկվելով իրենց բնության պաշտպան կազմակերպությունների ճնշմանը, պահանջում են էլ ավելի խստացնել եղած արգելքները եւ կետերի համար առանձին արգելանոց ստեղծել Անտարկտիդայում:

## Ռուսաստանը մտահոգված է Բոսնիայի դեպքերից

Ինչպես հայտնի դարձավ Ինտերֆաքսին, մայիսի 12-ին Ռուսաստանի նախագահի հատուկ ներկայացուցիչ Վիտալի Չուրկինը մեկնիր է Զագրեբ թռչել Խորվաթիայի նախագահ Ֆրանյո Թուջմանի հետ հանդիպում ունենալու համար: «Վ. Չուրկինը Ֆ. Թուջմանին կտեղեկացնի, որ Մոսկվան մտահոգված է կենտրոնական Բոսնիայի Մոստարի երջանում բոսնիացի մահմեդականների դեմ խորվաթական կազմավորումների ռազմական գործողությունների առնչությամբ», ԻԴ-ին ասաց Ռուսաստանի արտգործնախարարության բարձրաստիճան աշխատակիցներից մեկը: Նա խիստ հոռետեսորեն գնահատեց Խորվաթիայի դեմ ՄԱԿ-ի այնպիսի պատժամիջոցների կիրառումը, որոնք արդեն գործում են նոր Հարավսլավիայի (Սերբիայի ու Չեռնոգորիայի) նկատմամբ: «Նույնիսկ եթե նման բանաձեւ առաջ քաշվի ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում, դիչ հավանական է, որ Ռուսաստանի արեւմտյան գործընկերները արտահայտվեն դրա օգտին», նշեց դիվանագետը: ԻԴ

Ազգ

## Ռ. Ահարոնյան. «Ես ստեղծագործական մեծ բավարարվածություն ապրեցի»

Ուցած ձմեռն աբվեսի մարդկանց համար կրկնակի ողբերգական էր. ստեղծագործական դարաշրջանը հոգեկան հավասարակշռությունից ավելի շատ է հանում, քան կենցաղային ձախողություններ: Ավելի ծանր ի՞նչ կարող է լինել, քան երբ գիտնականը զրկվում է գրելու, հրատարակելու, իսկ կատարողը նվագելու, ելույթ ունենալու հնարավորությունից: Դատապարտվելով անգործության, ստեղծագործող անհատը կորցնում է կյանքի հանդեպ խթանիչ առիթատակ, իսկ այն ոչ մի կենսաներարկման միջոցով վերականգնել չես կարող:

Նրանք, որ կարողացան հաղթահարել այդ ճգնաժամային ժամանակը, պահպանելով ստեղծագործական վիճակը, երջանիկ են: Հաճելի է, երբ այդպիսիք են դառնում խիստ արժանավոր մարդիկ, ինչպիսին Ռուբեն Ահարոնյանն է: Նա, հայկական կատարողական արվեստի առաջատարը, կարիք չունի ոչ գովազդի, ոչ հատուկ ներկայացվելու: Լինելով բարձրակարգ ջութակահար, Հայաստանի կամերային անսամբլի գեղարվեստական ղեկավարն ու դիրիժորը, Երեւանի կոնսերվատորիայի պրոֆեսոր, նա մշտապես մասնագիտական կատարելագործման, համերգային ցանկի ընդլայնման նոր կատարողական խնդիրներ հարուցելու վիճակի մեջ է: Բացի դրանից, նա այն էջերից մեկն է, որ պահպանել է ստեղծագործական կարողը Ռուսաստանի մշակույթի հետ:

Այդպես էր 1993 թ. ձմռանը, հունվարին մեկնելով Մոսկվա, որտեղ ժամանակին սովորել էր Մոսկվայի կոնսերվատորիայի ասպիրանտուրայում. Ահարոնյանը երկու ամսվա ընթացքում ութ համերգ տվեց ռուսական մայրաքաղաքի տարբեր դահլիճներում: Ջութակահարն ինքը պատմում է, որ այս անգամ նա այնտեղ գնաց առանց որեւէ հրավերի: Բայց դիմելով Մոսկվայի Ֆիլհարմոնիային, անմիջապես մի քանի ելույթի առաջարկություն ստացավ: Այդ ելույթները կարելի է բաժանել երկու խմբի:

Առաջին խմբին կարելի է դասել ոչ միայն երաժշտական, այլեւ հասարակական-քաղաքական նշանակություն ունեցող ելույթները: Մասնավորապես՝ նախկին Լազարյան ճեմարանի, այժմ Ռուսաստանում Հայաստանի մշակութային ներկայացուցչության հիանալի դահլիճում կայացած մենակատարային համերգները: Այդ համերգներից երկրորդը, Ֆելիքս Մամիկոնյանի նախաձեռնությամբ, հատուկ հրավերով էր: Դրան ներկա էին Մոսկվայում տասնհինգ երկրների դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչներ: Բացի դրանից, կարեւոր է նշել Ռուբեն Ահարոնյանի մասնակցությունը Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի եւ Համայն Ռուսիոց պատրիարք Ալեքսի Երկրորդի պատվին կազմակերպված երաժշտական ծրագրին:

Համերգների մյուս խումբը, որ արդեն զուտ երաժշտական կարգի էր, բացեց մերձմոսկովյան Վոսկրեսենսկ քաղաքում տեղի ունեցած ելույթը, որին հետեւեցին Մոսկվայի չորս համերգները: Փետրվարի 19-ին տեղի ունեցավ Ահարոնյանի մենակատարային համերգը Մոսկվայի կոնսերվատորիայի մեծ դահլիճում, որը տրամադրվում է միայն ընտիր երաժիշտներին: Ծրագրում Բեթհովենի թիվ 6 սոնատը, Բրամսի թիվ 3 սոնատը, Կ. Սինդինգի ջութակի եւ դաշնամուրի համար սյուիտը, Սարասատեի Խաղանական պարերը: Դաշնամուրի պարտիան կատարեց ջութակահարի կինը՝ Ավետանա Սաֆոնովան, նրա մշտական զուգընկերը երեւանյան համերգասրահում: Իսկ մարտին տեղի ունեցան Ահարոնյանի ելույթները Մոսկվայի Ֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախմբի, դիրիժոր Անդրեյ Չիստյակով, Բրամսի ջութակի եւ նվագախմբի համար կոնցերտը (ծննդյան 160-ամյակի առթիվ) եւ Մեծ սիմֆոնիկի հետ, դիրիժոր՝ ավստրիացի Գեորգ Մարկ, Պրոկոֆեւի ջութակի եւ նվագախմբի համար թիվ 1 կոնցերտը: Ահարոնյանի բոլոր ելույթները մտնում էին Մոսկվայի ֆիլհարմոնիկ համերգների համակարգի մեջ: Լեփլեցուն դահլիճներ.- բնականաբար, աղահովում էին ջերմ ընդունելությունը, իսկ արհեստի համար՝ ոգու բարձր վիճակ:

Ռ. Ահարոնյանի այս համերգների հաջողությունն իր հետ բերեց նոր հրավերներ: Այժմ ջութակահարը դարձյալ Մոսկվայում է, որտեղ մայիսի ընթացքում տեղի կունենան ելույթներ Ռուսաստանի կամերային նվագախմբի հետ համատեղ, որը կղեկավարի ամերիկահայ Կոնստանտին Օրբելյանը (նամակագիր՝ Կ. Օրբելյանի եղբորորդին): Նրա հետ Ահարոնյանն առաջին անգամ կկատարի Ալֆրեդ Շնիտկեի Կոնչերտո գրոսսոն: Այնուհետեւ հունիսին նախատեսվում է նրա մասնակցությունը «Սանկտ Պետերբուրգի պալատներ» միջազգային փառատոնին, որի կազմակերպիչը, ղեկավարը եւ հովանավորներից մեկը ջութակահար եւ դիրիժոր Կ. Օրբելյանն է:

Փառատոնն, անց է կացվում երրորդ անգամ, եւ Ահարոնյանն արդեն երրորդ անգամ է մասնակցում դրան: Այս անգամ դաշնամուրային եռյակը, որի մեջ մտնում են Ռ. Ահարոնյանը (ջութակ), Մեղեա Աբրահամյանը (թավջութակ) եւ Կ. Օրբելյանը (դաշնամուր), հունիսին բացի Սանկտ-Պետերբուրգից, կմասնակցի գերմանական Պոտսդամում կայանալիք ավանդական երաժշտական փառատոնին:

Փառատոնը կայանալու է Սան Սունի հանրահայտ պալատի ճոխ դահլիճներում:

Այսպիսով, ճակատագիրը կարող է ժպտալ, եթե երաժիշտը հակված է նրան ձեռք մեկնելու: Իսկ ձեռք մեկնում է նա, ով սիրում է աշխատել եւ հավատում է արվեստով հաղթելու կենսական կոչմանը: Ռուբեն Ահարոնյանը պատկանում է հաղթողների թվին: Նրա նվագելու ոճը, որը դաստիարակված է ջութակահարի դպրոցի լավագույն ավանդույթներով եւ բազմաղադրված է երաժշտական տաղանդով, վաղուց է արժանացել միջազգային փառքի: Սակայն, ինչպես ցանկացած իսկական արվեստագետը, նա չի կարող առրել անցյալի շահածներով. նրան պետք է արձագանքվող ներկա: Եւ այժմ, երբ Ահարոնյանը, իր բառերով, «ապրում է ստեղծագործական բարձր բավականություն», մենք կիսում ենք նրա ուրախությունը:

ՍՎԵՏԼԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Ազգ - Մարզական

## ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ, ԱՂՋԻԿՆԵՐ

**Մեր թղթակից ՍՈՒՐԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԸ հաղորդում է Ֆրանսիայից**

Բասկետբոլի կանանց Հայաստանի հավաքականը Վալանսիայ ժամանեց Հավր, որտեղ մարզական փառատոնի ծրագրով 2-րդ անգամ հանդիպեց Եվրոպայի ուժեղագույն թիմերից մեկի՝ Վալանսիեն քաղաքի «Օրշի» հետ, որը Ֆրանսիայի վերջին առաջնությունում գրավել է 3-րդ տեղը, իսկ Ռոնկետիի գավաթի խաղարկությունում հասել մինչեւ կիսաեզրափակիչ: Մեր ընտրանին Թուլզի ճանապարհին արդեն հանդիպել է «Վալանսիեն-Օրշ» թիմի հետ եւ ինչպես հավանաբար գիտեք, զիջել 84:101 հաշվով: Այն ժամանակ մեր թիմն անակնկալի էր եկել սեւամորթ ամերիկացի 31-ամյա Ստրիսի (197 սմ) անզուգական խաղից, որին առաջին անգամ փորձարկում էր «Օրշ» թիմը եւ որ միայնակ վաստակել էր 58 միավոր:

Բոլորս անհամբերությամբ սպասում էինք «Օրշի» հետ հերթական հանդիպմանը: Հայաստանի հավաքականը ամենայն լրջությամբ էր նախապատրաստվել պատասխանատու մրցավեճին: Ցավոք պարզվեց, որ «Վալանսիեն Օրշն» Հավր է ժամանել առանց Ստրիսի, որը մրցաշրջանից առաջ 12 օրով մեկնել էր Ամերիկա:

Հավրի մարզական փառատոնը նվիրված էր տեղի «Սուրմոն» մարզական միության 65-ամյակին, եւ ծրագրի մեջ ընդգրկված էին միայն տարբեր տարիքային խմբերի աղջիկների բասկետբոլային հանդիպումներ, իսկ առանցքայինը Հայաստան-«Վալանսիեն Օրշ» մրցավեճն էր, որը գեղեցիկ տոնակատարության եզրափակիչ արժանի ակորդ հանդիսացավ:

Ընդհանրապես պետք է ընդգծել, որ «Սորբոն» միությունը վերջերս ջանք չի խնայում կանանց բասկետբոլի զարգացմանը քաղաքում հաղորդելու:

Երբ Հայաստանի հավաքականը ժամանեց Հավր, նրան անմիջապես ընդունեց քաղաքապետը: Մարզական փառատոնը համընկավ հաղթանակի տոնակատարությանը: 2-րդ համաշխարհային պատերազմի ժամանակ Հավրը ամբողջովին նորոգվել էր: 1944 թ. գերմանացիները ռմբակոծել էին քաղաքը, եւ բնակչության գրեթե 80 տոկոսը զոհվել էր:

Այսօր 200 հազար բնակչություն ունեցող եւ Ատլանտյան օվկիանոսի ափին փռված գեղատեսիլ քաղաքը Ֆրանսիայի խոշոր նավահանգիստներից մեկն է: Հավրը վաղուց եղբայրացած է Սանկտ Պետերբուրգի հետ եւ այստեղ ռուսախոսների հաճախակի կարելի է հանդիպել: Քաղաքը նաեւ մարզական լավ ավանդույթներ ունի: Տեղի «Հավր» ֆուտբոլային թիմը հանդես է գալիս Ֆրանսիայի բարձրագույն խմբի առաջնությունում եւ վերջինիս կազմում ընդգրկված է մեր ֆուտբոլասերներին ծանոթ Գիվի Գուրուլին, որը դարձել է թիմի գլխավոր խմբարկուն:

Հայաստան-«Օրշ» հանդիպումը մեծ հետաքրքրություն էր առաջացրել այստեղ: Լեփլեցուն մարզադահլիճի հանդիսականների թվում էին Հավրի փոխքաղաքապետ Պիեր Բիրը, դեպարտամենտի նախագահ Ժան Պիեր Սուլինեսը, Օդային կոմիտեի նախագահ Անդրե Յուլեն եւ ուրիշներ:

Հանդիպումն սկսվեց «Օրշի» ակտիվ գործողություններով: Այս անգամ անկասելի էր մեկ այլ սեւամորթ խաղացող՝ Ընդիայը: 9-րդ րոպեին «Օրշն» առջեւում էր 26:19 հաշվով: Ստիպողաբար մեր աղջիկները, տիրելով նախաձեռնությանը,- ի՞նչ կեսը շահեցին 50:47 հաշվով: 2-րդ կեսում Հայաստանի հավաքականի առավելությունն ավելի շոշափելի էր:

Խաղավարից 5 րոպե առաջ մեր թիմը առջեւում էր 85:72 հաշվով: Տեղի ունեցավ անհավանականը: Այդ 5 րոպեի ընթացքում մեր աղջիկները, որոնք էր տարրինակ է, ոչ մի միավոր չվաստակեցին, իսկ «Օրշն» եզրափակիչ 2 րոպեներին իրար հետեւից ձեռք բերեց 8 միավոր:

Այնուամենայնիվ Հայաստանի հավաքականը հաղթեց 85:80 հաշվով, ոչ լանը վերցնելով պարտության դիմաց: Մեր թիմից ամենաարդյունավետը Ալեքսանդրովա-Քոչարյանն էր, որը վաստակեց 24 միավոր, Էմմա Բեգլարյանը ձեռք բերեց 22 միավոր: Բոլորն էլ բարձր գնահատեցին Հայաստանի հավաքականի խաղը: Տեղի թերթերից մեկը նշեց, որ շաս վաղուց Հավրում կանանց թիմերի նման բարձր մակարդակի խաղ չի եղել եւ ավելացրեց. «Շնորհակալություն, աղջիկներ»: Հավրում էլ ընդունելությունն ամենաբարձր մակարդակի էր:

Հայաստանի հավաքականը ժամանել է Փարիզ, բայց նրան հետաքրքրում է «Վալանսիեն-Օրշ» թիմը, որը ծառայ է ռեւանշի եւ առաջարկել է 3-րդ հանդիպումը, այս անգամ Փարիզի մերձակայքում: ■

## ՀՄԸՄ-ն կներկայացնի Հայաստանը

Երեկ կայացավ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի գործկոմը որոշեց. «Շիրակ»-ի դիմումի առթիվ եւ Մեծ սիմֆոնիկի հետ, դիրիժոր՝ ավստրիացի Գեորգ Մարկ, Պրոկոֆեւի ջութակի եւ նվագախմբի համար թիվ 1 կոնցերտը: Ահարոնյանի բոլոր ելույթները մտնում էին Մոսկվայի ֆիլհարմոնիկ համերգների համակարգի մեջ: Լեփլեցուն դահլիճներ.- բնականաբար, աղաղակվում էին ջերմ ընդունելությունը, իսկ արհեստի համար՝ ոգու բարձր վիճակ:

Ռ. Ահարոնյանի այս համերգների հաջողությունն իր հետ բերեց նոր հրավերներ: Այժմ ջութակահարը դարձյալ Մոսկվայում է, որտեղ մայիսի ընթացքում տեղի կունենան ելույթներ Ռուսաստանի կամերային նվագախմբի հետ համատեղ, որը կղեկավարի ամերիկահայ Կոնստանտին Օրբելյանը (նամակագիր՝ Կ. Օրբելյանի եղբորորդին): Նրա հետ Ահարոնյանն առաջին անգամ կկատարի Ալֆրեդ Շնիտկեի Կոնչերտո գրոսսոն: Այնուհետեւ հունիսին նախատեսվում է նրա մասնակցությունը «Սանկտ Պետերբուրգի պալատներ» միջազգային փառատոնին, որի կազմակերպիչը, ղեկավարը եւ հովանավորներից մեկը ջութակահար եւ դիրիժոր Կ. Օրբելյանն է:

Փառատոնն, անց է կացվում երրորդ անգամ, եւ Ահարոնյանն արդեն երրորդ անգամ է մասնակցում դրան: Այս անգամ դաշնամուրային եռյակը, որի մեջ մտնում են Ռ. Ահարոնյանը (ջութակ), Մեղեա Աբրահամյանը (թավջութակ) եւ Կ. Օրբելյանը (դաշնամուր), հունիսին բացի Սանկտ-Պետերբուրգից, կմասնակցի գերմանական Պոտսդամում կայանալիք ավանդական երաժշտական փառատոնին:

Փառատոնը կայանալու է Սան Սունի հանրահայտ պալատի ճոխ դահլիճներում:

Այսպիսով, ճակատագիրը կարող է ժպտալ, եթե երաժիշտը հակված է նրան ձեռք մեկնելու: Իսկ ձեռք մեկնում է նա, ով սիրում է աշխատել եւ հավատում է արվեստով հաղթելու կենսական կոչմանը: Ռուբեն Ահարոնյանը պատկանում է հաղթողների թվին: Նրա նվագելու ոճը, որը դաստիարակված է ջութակահարի դպրոցի լավագույն ավանդույթներով եւ բազմաղադրված է երաժշտական տաղանդով, վաղուց է արժանացել միջազգային փառքի: Սակայն, ինչպես ցանկացած իսկական արվեստագետը, նա չի կարող առրել անցյալի շահածներով. նրան պետք է արձագանքվող ներկա: Եւ այժմ, երբ Ահարոնյանը, իր բառերով, «ապրում է ստեղծագործական բարձր բավականություն», մենք կիսում ենք նրա ուրախությունը:

ՍՎԵՏԼԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

## Շուտանիկները հաղթում են

Երեւանի Շախմատիստի կենտրոնական տանն ավարտվեց շախմատի մայրաքաղաքի 1993 թ. առաջնության եզրափակիչ փուլը: Թե տղամարդկանց եւ թե կանանց մրցումներում ընդգրկված էին 14 մասնակիցներ, որոնք հաջողությամբ անցել էին նախնական փուլը:

վեց վարպետության թեկնածու Շուշանիկ Գաղուստի Հայրապետյանը: վաստակելով 10.5 միավոր: Նրանից ընդամենը կես միավորով՝ ետ մնաց մյուս Շուշանիկ Հայրապետյանը: Երրորդ տեղը 9.5 միավորով զբաղեցրեց վարպետության թեկնածու Մարինե Ավետիսյանը: Այս երեք մասնակիցները իրավունք ստացան մասնակցելու Հայաստանի շախմատի բարձրագույն խմբի առաջնությանը:

Տղամարդկանց մրցումներում լավագույն եռյակը կազմեցին վարպետության թեկնածուներ Արթուր Առաքելյանը 9.5 միավոր, Պերենիկ Լեւոնյանը 9 միավոր եւ Ատոմ Նադանյանը 8 միավոր: Այս երեքը, ինչպես նաեւ հաղթող դարձած շախմատիստներն իրավունք ստացան մասնակցելու Հայաստանի առաջին խմբի առաջնության խաղերին: ■

## Միխայել Շտիխը ուրախացնում է գերմանացիներին

Համբուրգում ավարտվեց թենիսի տղամարդկանց միջազգային խոշոր մրցաշարը: Մենք արդեն պատմել ենք մի քանի օր առաջ ավարտված կանանց մրցաշարի մասին, որտեղ անախորժ միջադեպ պատահեց: Դանակահարվեց աշխարհի առաջին թենիսիստուհի Մոնիկա Սելեսը: Իսկ կանանց մրցումներում հաղթող ճանաչվեց խորվաթուհի Սանչես-Վիկարիոն, որը եզրափակիչում հաղթեց գերմանուհի Շտեֆի Գրաֆին: Նախորդ օրն ավարտվեց նաեւ տղամարդկանց մրցաշարը: Մեկ միլիոն 700 հազար դոլար մրցանակային հիմնադրամ ունեցող այս մրցաշարում եզրափակիչ էին դուրս եկել Ռուսաստանի ներկայացուցիչ Անդրեյ Չեսնոկովը եւ աշխարհի 10 լավագույն թենիսիստների ցուցակը եզրափակող գերմանացի Միխայել Շտիխը: Շտիխը, որը հազվադեպ է հաղթում խոշոր մրցաշարերում, այն էլ իր հայրենակիցների առջեւ, այս անգամ 3:1 ընդհանուր հ[illegible] (6:3, 6:7, 7:6, 6:4) հաղթանակ [illegible] անգամ Շտիխը հաղթել [illegible] դեկտեմբերին Մյունխեն[illegible] ցուցակված «Ոսկե սաղավարտ» 6 [illegible] դոլար հիմնադրամ ունեցող խոշոր մրցաշարում:

ԱՇԽՆ ՍԱՐՏԻՐՈՍՅԱՆ

digitised by A.R.A.R.@

Wall Street Journal

# ՝ԱՄԵՐԻԿՅԱՆ ԹԵՐԹԸ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՑՈՒՄ ԲՌՆՈՒՄ Է ԱԴՐԲԵՋԱՆԻ, ՆԵՐՔԻՆ ԿՅԱՆՔՈՒՄ Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԿՈՂՄԸ

Բոսնիայում եւ այլուր տարվելիք ամերիկյան հաղթականության մասին գրված խմբագրական հոդվածում ամերիկյան հեղինակավոր թերթերից «Ուոլ Սթրիթ Ջըռնըլը»- իր երեկվա համարում անդրադառնում է նաեւ հայ-ադրբեջանական հակամարտությանը, ընդհանրապես ադրբեջանամետ եւ իսլամամետ դիրքերից: Աշխարհին ցնցադաստելով այն բանի համար, որ, իբր, մի կողմ է բաժանվում, երբ քրիստոնյաներն են պարտության մատնում մահմեդականներին, հոդվածագիրը ցնցադաստում է նաեւ ամերիկյան հաղթականությունը Բոսնիայում, որտեղ զենքերի երջափակում էր հաստատվել, որը, ըստ խմբագրության, օգնել է տեղի սերբերին ճնշելու մահմեդականներին: Եւ աշխարհը դիտելով նույն՝ իսլամ-քրիստոնյա հակադրության առանցքից, հոդվածագիրը գրում է. «Մենք միայն պատմություններ լսեցինք սովահար հայերի մասին, մինչդեռ նրանք մեծապես հաջողակ գրոհով հաղթում էին ազերիներին»:

«Այսօրվա աշխարհը լեցուն է բոսնիաներով, կարդում ենք խմբագրականում, եւ էթնիկական զտումը տեղի է ունենում նաեւ Տաջիկստանում, մինչ Հայաստանը դեռ վերջերս իսլամներից պոկեց մի տարածք Լեռնային Ղարաբաղի քրիստոնյաներին կաղվելու համար»: Ու որոնելի նման բաներ տեղի չունենան, խմբագրականն առաջարկում է... ավելի ազդու միջամտել այլ երկրների ներքին գործերին: «Մենք այնքան էլ լավ չենք մեր բարեկամներին ու պոտենցիալ բարեկամներին որոշելու գործում, գրում է «Ուոլ Սթրիթը», նույնիսկ եթե դրանք հանգուցյալ Թուրգուտ Օզալի նման մարդիկ են Թուրքիայում, կամ Միլան Պանիչը Սերբիայում՝ Սլոբոդան Միլոշեւիչի դեմ իր ընտրարշավի ժամանակ, կամ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը սփյուռքի հայերի կողմից ֆինանսավորվող դաշնակ ծայրահեղականներին զսպելու գործում»:

*Ամերիկյան գերուժի գերակայության մասնակցությամբ գրված այս խմբագրականն ավելի ամբողջական կներկայացնենք մեր առաջիկա համարում:* ■

Լեցիոն

# Խոշորագույն աղետը Բայկոնուրում

Համաշխարհային հրթիռաշինության պատմության մեջ խոշորագույն աղետը եղել է խորհրդային ռազմական հրթիռի պայթյունը, որը տեղի է ունեցել Բայկոնուրի տիեզերադրոմում 1960 թ. հոկտեմբերին: Աղետի հետեւանքով զոհվել է առնվազն 91 մարդ, վկայում են մինչեւ վերջերս ռազմական գաղտնիք համարված արխիվային վավերագրական կինոդրվագները, որոնք Մոսկվայում Կինոն Ցուսին գործակալությունն ստացել է «Վիդեոկոմոս» ընկերությունից, եւ որոնք մայիսի 10-ին ցուցադրվել են Ճապոնիայի հեռուստատեսությամբ: Ինչպես նշում է գործակալությունը, այդ ողբերգությունը տեղի է ունեցել տիեզերքի եւ հրթիռաշինության յուրացման բնագավառում առաջատության հասնելու համար ծավալված խորհրդա-ամերիկյան անչափ դաժան մրցավազքի պայմաններում, այն բանից կես տարի առաջ, երբ նույն տիեզերադրոմից աշխարհում առաջին թռիչքը կատարեց տիեզերագնաց Յուրի Գագարինը:

Աղետը տեղի է ունեցել 1960 թ. հոկտեմբերի 24-ին, նոր տեսակի խոշոր ռազմական հրթիռի ենթադրյալ արձակումից կես ժամ առաջ: Հուժկու պայթյունը եւ արձակման հարթակը հրե ծովի վերածած վիթխարի հրդեհը անօգուտ դարձրին կրակի միջից տիեզերադրոմի տասնյակ բանվորներին, ինչպես նաեւ զինվորական դիտորդներին վերկելու հրեջնեռի փորձերը: Հրդեհի բռնկումը ժամպավենի վրա չի տեսագրվել, սակայն ուրիշ աղբյուրներից հայտնի է, որ դրա պատճառը եղել է վառելիքի արտահոսքը, որին հակառակ հրթիռի արձակման աշխատանքները շարունակվել են:

Լայն հասարակության համար մինչեւ օրս անմատչելի արխիվային մյուս կինոդրվագները ցույց են տալիս, թե ինչպես տիեզերագնաց-օդաչու Ալեքսեյ Լեոնովը հիշ էր մնում զոհվեր 1965 թ. մարտին պատմության մեջ առաջին անգամ բաց տիեզերդրուս գալիս: Այդ վտանգավոր գործողության ժամանակ տիեզերագնացի սաղավարտը վնասվածքներ ստացավ, որի հետեւանքով նա ժամանակավորապես զրկվեց երկրից 180 կիլոմետր հեռավորության վրա ուղեծրում պտտվող «Վոսխոդ-2» տիեզերանավ վերադառնալու հնարավորությունից եւ կարողացավ դա անել միայն հսկայական ինքնաթիռաղեսման շնորհիվ:

ԱՐՄԵՆՊՐԵՍ ԻՏԱՌ-ՏԱՍՍ

Քաղաքի Հայր

## ԳԿՉՊ անդամների դատավարությունը կվերսկսվի մայիսի 18-ին

ԳԿՉՊ անդամների գործով անցկացվող դատական նիստը ենթադրվում է վերսկսել մայիսի 18-ին: Ինչպես հաղորդում է Ռուսաստանի գերագույն դատարանի զինվորական կոլեգիան, դա պայմանավորված է ամբաստանյալներից մեկի՝ Ալեքսանդր Տիզյակովի հետագա բուժման անհրաժեշտությամբ: ԻՏ

## Ռազմական զորքերի խաղաղ արտադրանքը

Ուկրաինայի պաշտպանության նախարարության Խարկովի ավտոնորոգման գործարանը՝ թողարկում է ճակնդեղի կուլտիվատոր, բետոնախառնիչներ, ծեոի վերահանքեր, Վազ եւ Ազլկ ավտոմեքենաների կանտիչներ: Գործարանը նաեւ իրականացնում է «Լենդրովեր» մակնիշի ռազմական ավտոմեքենաների վերասարքավորումը: Այս տարի կծեւավորվեն ՆԱՏՕ-ի սպառազինման մեջ օգտագործված 40 հազար մեքենաներից 5 հազարը, որից յուրաքանչյուրը գնվել է 6 հազար դոլլարով: ՆՏ

## Ինչպես օգտագործվեց բաժնետերերի դրամը

Վերականգնման ու զարգացման եվրոպական բանկի բաժնետերերի պահանջով ստեղծված կոմիտեն առաջարկել է անցկացնել իր ընթացիկ ծախսերի համապարփակ հետաքննություն, որպեսզի իր հետեւությունները ներկայացնի մինչեւ այս ամռան կեսերը: Բանկը, որի կազմի մեջ մտնում են գրեթե 60 բաժնետեր երկրներ, հիմնվել էր երկու տարի առաջ Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի երկրներին եւ նախկին ԽՍՀՄ հանրապետություններին ֆինանսական օգնություն ցույց տալու համար: Պարիզին «Դայնենշել թայմզ» թերթը բանկին մեղադրեց սեփական կարիքների համար բազմամիլիոնանոց ծախսերի կատարման մեջ, մինչդեռ նախկին սոցիալիստական կարիքավոր երկրներին անհրաժեշտ միջոցներ են հատկացվում: Բանկի տնօրենների խորհրդի նիստի ընթացքում կոմիտեն հանդես եկավ մանրակրկիտ տեսչական ստուգման կազմակերպման օգտին, որը կընդգրկեր բանկի ծախսերի քաղաքականության փաստորեն բոլոր կողմերը:

ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՌ-ՏԱՍՍ

## Եվրոպա-Ասիա ավտոմայրուղուն նվիրված միջազգային կոնֆերանս

Մայիսի 9-ին Բրյուսելից վերադարձավ վրացական պատվիրակությունը, որը մասնակցել էր Եվրոպա-Ասիա ավտոմայրուղու շինարարությանը նվիրված միջազգային կոնֆերանսին, ավտոմայրուղին անցնելու է Վրաստանի տարածքով: Պատվիրակության ղեկավար, փոխվարչապետ Զուրաբ Բերվալիշվիլին վրացական հեռուստատեսությանը տված հարցազրույցում հայտարարել է, որ «մեծ գործ է արվել»: Միջազգային փորձագետները համոզվեցին, որ Վրաստանում հիանալի մասնագետներ կան, եւ ամենայն հավանականությամբ կընդունվի ավտոմայրուղու վրաց մասնագետների առաջարկած նախագիծը: 1994 թ. նախատեսվող այս հարցին նվիրված հաջորդ կոնֆերանսը տեղի է ունենալու Վրաստանում: ՆՏ


### Ուշադրություն, դիմում են ամերիկացիները

Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարությունը կգնահատի Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիների օգնությունը, որոնք վկա են եղել նախկին ԽՍՀՄ հակաօդային ուժերի կողմից Ամերիկյան C-130 4 շարժիչով ինքնաթիռի ոչնչացմանը, որը խփվեց 1958 թվականի սեպտեմբերի 2-ին, Լենինականից 20 կմ հարավարեւմուտք ընկած տարածքում, կամ հանդիպել են պարաշյուտով ինքնաթիռը լքած եւ աղահով տեղ իջած անձնակազմի անդամների հետ: Մեզ համար հետաքրքրություն է ներկայացնում նաեւ 1941 թվականից ի վեր նախկին Խորհրդային Միության տարածքում գերված կամ անհայտ կորած ամերիկյան զինծառայողների ճակատագրին վերաբերող որեւէ լուր, որի առկայության դեպքում խնդրում ենք դիմել Երեւանի Ամերիկյան դեսպանատուն:

Հասցեն: Երեւան, Բաղրամյան 18, հեռախոս 52 46 61

### Կորել են «Ազգի» արկղերը

Ապրիլի 30-ին Հայկական միացյալ ֆոնդի օգնությամբ Մ. Նահանգներից Հայաստան առաքված մարդասիրական օգնության մեջ «Ազգի» խմբագրության համար սահմանված արկղներից երկուսը կորել է: Դրանցից մեկի մեջ կար Apple Mac Classic II համակարգիչ, իսկ մյուսում 2 միկրոկասետ ձայնագրիչ, լազերային տպիչի համար թանաք, միացման լարեր եւ այլն: Երկու արկղերի վրա էլ արձանագրված են եղել խմբագրության անունը եւ հասցեն: Տեղեկություն ունեցողներից խնդրում ենք կապ հաստատել խմբագրության հետ:

### Հայտարարություն

Մոսկվայի հեղինակավոր փողոցներից մեկում վաճառում եմ «փոքր տուկա» վրանային ավանով: Կապվել 339-82-34 հեռախոսահամարով:




### «ԿԱՊՐՈԼԻՏ» ֆիրմա եւ «ԲԻՈԿՈՆՎԵՐՍԻԱ» ասոցիացիան

Ջրվեժ ավանի պահեստից վաճառում են կենսահումուս:
Մեծածախ գնորդների համար սահմանված է 20 տոկոս զեղչ:
*Վճարը ցանկացած ձեւով*
Հեռախոսներ՝ 27-81-91, 58-04-26, 58-54-27, 56-83-31:




Հիմնադիր եւ հրատարակիչ «Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Գլխավոր խմբագիր ՏԱԿՈՒՀԻ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր ՀԱՍԼԵՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ / 581841
Տնօրեն ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / 562863
Apple® Macintosh® համակարգային շարուածքը «Ազգ» թերթի
Azg armenian daily
Editor H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 375010
Թերթի ձեւավորման եւ էջադրման հեղինակ ՊԱՎԵԼ ԴԱԼԼԱՔՅԱՆ
ՀՀ նախարարների խորհրդին առընթեր «Պարբերական» հրատ. տպարան, Երեւան 23 Արգավանդեանց 2 Գրանցման թիվ 65. Դասակ 69149. Տպաքանակ 36 000. Պատվեր 1507 Ստորագրված է տպագրության՝ 11.5.1993

digitised by A.R.A.R.@